Нельзя не отметить, что все эти новшества не отразились на уровне онкологической заболеваемости. В бытность мою директором ОНЦ МЗ Армении в Советском Союзе ежегодно выявлялось 500 тысяч больных раком, а сейчас, в одной лишь РФ число новых случаев – 600 тысяч. Аналогичная картина и в других бывших советских республиках. В Армении, где число первичных больных было 20 тысяч, в 2016 году стало 39 тысяч и это – несмотря на миграцию. Столь часто озвучиваемые на Западе успехи, вроде – «рак пятится назад», многими серьезно не воспринимаются. В лечении опухолей в обозримом будущем, на наш взгляд, неуместны суждения в абсолютных категориях. Вот почему общество так горячо восприняло призывы Президента Российской Федерации В. В. Путина к Федеральному собранию о необходимости «возродить передовые традиции русских терапевтических школ – профилактическую идею».

Профилактическая онкология – это широкий круг мероприятий от пропаганды здорового образа жизни и, прежде всего, отказа от курения, оздоровления окружающей среды, до выявления пациентов не только по обращаемости, но и посредством профилактических осмотров. Намечается и активная патогенетическая профилактика рака, основанная на создании протеиновых профилактических вакцин. Начинает приобретать реальные очертания концепция вакцинопрофилактики рака.

Взаимосвязь и соподчиненность факторов канцерогенеза и становления толерантности к антигенно чуждым раковым клеткам столь сложны и многолики, что вмешательство в эти интимные процессы далеко не

всегда предсказуемо. Сама по себе констатация факта озлокачествления и терпимости к чуждым клеточным структурам ещё не означает понимание глубинных причинно-следственных механизмов. Как и в других областях знаний, наука пока в состоянии ответить лишь на вопрос: «что и как, но далека от понимания – почему?!». Многие гипотезы канцерогенеза и иммунологической толерантности до сих пор не могут претендовать на достоверность. Извините за патетику – «чем больше увеличивается круг наших знаний, тем больше расширяется площадь незнания». Нет ясного ответа даже на основополагающие проблемы природы раковых заболеваний и развития толерантности. Лишь в вероятностной форме говорится о терапевтической эффективности «отключения» регуляторных Т-лимфоцитов (супрессоров), могущее привести к активации других субпопуляций, распознающих и девитализирующих возникающие раковые клетки различного генеза.

Большой группой исследователей под руководством Рудольфа Каакса из Онкологического научного центра в Гейдельберге (DKFZ) более 20 лет изучается проблема толерантности иммунной системы к раковым клеткам в аспекте предсказания возникновения некоторых видов опухолей. Если высокотехнологические приемы молекулярной биологии канцерогенеза и толерантности имеют в основном теоретический интерес и широко дискутируются, то исследования группы Р. Каакса пронизаны и очевидной прикладной направленностью.

Впервые на 25000 волонтерах с учетом различной рискованной принадлежности выведен индекс иммунотолерантности – immune CRIT (отношение числа ингибирующих регуляторных Т-клеток к общему количеству Т-клеток, в том числе «опухоль-сжигающих»). При раке легкого имела место 100% достоверность предсказания его возникновения у практически здоровых людей; при раке молочной железы – трехкратное повышение индекса по сравнению с контрольной группой, между тем как в отношении рака простаты существенной разницы не было установлено [14]. Главный вывод: иммунотолерантность скорее является причиной, нежели следствием злокачественной опухоли. (Разумеется, это еще не говорит о месте и времени формирования опухолевого зачатка у конкретного индивидуума.) Впервые в условиях человеческой патологии предсказывается возникновение раковой патологии легкого с высокой степенью вероятности.

Jeffrey S. Weber (2015) с исследователями из уни-

верситета Южной Калифорнии в Лос-Анжелесе давали пациентам инъекции антител против белка-маркера на мембране Т-супрессоров (CD25 и CD39), позволившие путем их дезактивации сохранить активность иммунной системы. Получены обнадеживающие результаты: 24 из 27 больных с меланомой остались живыми через 17 месяцев, а 3 пациента излечились. Авторы считают, что такой подход может быть применен и для лечения пациентов с другими видами злокачественных опухолей. Надо дать должное этим исследователям, которые добились разрешения провести подобное эвристическое испытание на больных [23].

Клинические наблюдения по преодолению толерантности все чаще касаются меланомы. По-видимому, выбор именно данной формы злокачественной опухоли пал на меланому в виду высокой иммуногенности её клеток. Для подавления активности Т-супрессоров Andtbacka R. et al (2015) [9] давали больным с генерализованной формой меланомы токсин дифтерии с интерлейкином-2. Присоединение дифтерийного токсина к интерлейкину-2 обеспечивало его проникновение в Т-супрессоры с их инактивацией и подавлением толерантности. Авторы добились прекращения роста меланомы и уменьшения её размеров у 5-и из 7 больных. Проводится скрининг больных и колоректальным раком, основанный на снятии толерантности иммунной системы к данному виду опухоли [25].

Цитируемые работы примечательны тем, что несмотря на нерешенность основополагающих проблем иммунологической толерантности уже начаты клинические испытания по терапевтической эффективности её преодоления. Разумеется, и об этом уже было сказано, рассматриваемое направление может оказаться более результативным в аспекте предупреждения злокачественного роста у людей, предрасположенных к онкопатологии, а не при уже развившейся опухоли.

В НИИ канцерогенеза ФГБУ РОНЦ им. Н. Н. Блохина высказано предположение о взаимодействии линейных пептидов α -спиралей молекул МНС (major histocompatibility complex) с рецепторами Т-клеток, имитируя при этом участие контактного взаимодействия молекул МНС с TCR (T cell receptor). Для понимания молекулярных механизмов иммунотолерантности к зарождающимся раковым клеткам гипотеза исследовательской группы Д. Б. Казанского (2016) [3] нам представляется чрезвычайно перспективной. Затрагивается и эмбриогенетический аспект распознавания молекул МНС на уровне TCR, связанный с терминальными последовательностями генных сегментов TCR.

Во многом это перекликается с развитием периферических лимфоидных структур во внутриутробном периоде с участием медиаторов воспаления, цитокинов и фактора некроза опухолей (ФНО) [1].

Интерес к установлению природы толерантности и путей её нивелирования особенно возрос в последнее время. Этому способствовало выявление ряда фактов. В частности, установлено, что на фоне усиления иммунологической толерантности происходит экспрессия ФНО- β на поверхностных рецепторах GARP (glycoprotein A repetitions predominant), активизирующей рост клеток рака молочной железы [21]. Расшифрованы и некоторые детали эмбриональной терапии посредством противоопухолевых CD4 Т-клеток [18]. Оказалось, что иммунотолерантность к клеткам назофарингеальной карциномы можно полностью подавить бертезомибом [15]. Показана также терапевтическая эффективность диаглицерол-киназ в подавлении Т-клеточной толерантности [12]. На интенсивность иммунного ответа в аспекте снятия толерантности оказывает заметное влияние и радиочувствительность раковых клеток независимо от их гистогенеза [26].

Рассматривая молекулярные механизмы иммунотолерантности к раковым клеткам [16], подчеркивают чрезвычайную сложность, многоступенчатость и, порой, непредсказуемость вмешательства в эти процессы. Авторы полагают, что функциональная направленность Т-клеточной системы обусловлена и может быть реализована и без первичной иммунизации пациента. По их мнению, иммунный ответ во многом аутохтонен, саморегулируем. Как считает по другому поводу С. П. Капица – «подвержен собственным системным закономерностям».

По объективной значимости теоретических основ профилактической онкологии и результативности практических мер по их реализации мы полагаем, что первоочередной задачей в борьбе с раком на нынешнем этапе наших знаний является восполнение ослабленной противоопухолевой устойчивости, заложенной в природе человеческого организма. Это может быть достигнуто незначительным аутоантигенным «толчком» посредством фетальных белков, с которыми иммунная система взрослых и пожилых людей десятилетиями не сталкивалась и, посему, иммунный ответ на их экспрессию притупился. Со многих точек зрения, это физиологически обоснованная мера, рассчитанная на направленную сенсбилизацию хелперных и цитолитических субпопуляций лимфоцитов в «полезных» границах, осуществляемых в аутохтонном,

саморегулируемом режиме. Таким путем может быть достигнута девитализация первых же мутантных, либо заблудших эмбриональных клеток, вставших на путь малигнизации.

Изложенное выше опирается на оправдавшую себя со времен Дженнера, Пастера и Мечникова направленную стимуляцию защитных сил организма.

Процесс познания природы раковых заболеваний ассоциируется с «приближением к горизонту, который при этом все удаляется». Такая точка зрения правомерна для многих областей знаний.

Что же касается опухолевой патологии, то её этиология оказалась гораздо шире отдельно взятого причинного агента и опирается в сложнейшую взаимосвязь и соподчиненность многих внешних и внутренних воздействий. Как высказался президент Лондонского Королевского общества Мартин Рис: «все гипотезы в обозримом будущем так и останутся недоказанными».

Возникает извечный вопрос: Что делать?! Обращаясь к истории медицины приходит на ум такое впечатляющее за последние столетия событие, как полное искоренение оспы с лица Земли. Чисто эмпирически, опираясь на собственную интуицию, задолго до открытия мира бактерий и вирусов, дженнер навострил защитные силы человеческого организма против этой болезни. Жизнь показала, что этот урок истории и в эпоху высоких технологий не потерял своей злободневности.

Созданный биологически активный препарат ЭПОМ-LM защищен Патентом Российской Федерации: «Эмбриональный противоопухолевый модулятор Мкртчяна, способ получения и применения». Он зарегистрирован в МЗ РФ как новое лекарственное средство и получил Разрешение Росздравнадзора на применение в России новой медицинской технологии. Получение ЭПОМ-LM базируется не на искусственных приемах препаративной биохимии, а на природоподобной биотехнологии, основанной на высокой адсорбционной способности гликозаминогликанов межклеточного матрикса. Это позволило экстрагировать широкий пул фетальных белков (и не до конца идентифицированных эмбриональных протеогликанов) в состоянии, максимально близкому нативному.

ЭПОМ-LM предназначен (речь может идти только после государственной регистрации) взрослым людям из групп высокого онкологического риска: курение, предопухолевая патология, семейная предрасположенность, контакт с химическими и физическими канцерогенами, повышенная свертываемость крови,

стрессы и т.д. Физиологически обоснованным путем восполняется ослабленная противоопухолевая устойчивость взрослых и пожилых людей из групп онкологического риска. Перспективно и его применение в качестве противорецидивного средства.

Безопасность и эффективность ЭПОМ-LM изучена нами в соответствии с требованиями, предъявляемыми к новым лекарственным средствам. Активными компонентами препарата являются белки нормального эмбриогенеза [22]. Благодаря их информационной способности ЭПОМ-LM оказывает не только предупреждающее, но и общеукрепляющее, а также омолаживающее воздействие. Он удостоен ряда знаков отличия и золотых медалей на инновационных выставках в Бельгии, Швейцарии, Великобритании, Китае, США.

Композиция, безопасность и эффективность ЭПОМ

Для изучения состава ЭПОМ были использованы следующие методы:

- ◆ иммуноферментный анализ на основе моноклональных антител;
- ◆ гель-фильтрационная компьютерная хроматография;
- ◆ электрофорез в полиакриламидном геле;
- ◆ жидкостная хроматография под давлением;
- ◆ электронный парамагнитный резонанс.

Для определения безопасности ЭПОМ были изучены:

- ◆ острая токсичность;
- ◆ хроническая токсичность;
- ◆ способность индуцировать генные мутации в геноме бактерий штамма *Salmonella typhimurium* (тест Эймса);
- ◆ изучение возможной кластогенной активности методом хромосомных aberrаций в клетках костного мозга мышей;
- ◆ возможная днк-повреждающая активность ЭПОМ согласно нормативному документу GLP, возможная гонадотоксичность ЭПОМ на основе метода доминантных летальных мутаций;
- ◆ тератогенное и эмбриотоксическое действие ЭПОМ;
- ◆ испытания на аллергические свойства и пирогенность.

Для определения эффективности ЭПОМ были изучены:

- ◆ противоопухолевая активность;

- ◆ антиканцерогенное действие;
- ◆ противоопухолевое действие ЭПОМ на перевивных опухолях;
- ◆ специфический иммунитет, создаваемый ЭПОМ;
- ◆ антивирусная активность ЭПОМ;
- ◆ действие ЭПОМ на репликацию вируса иммунодефицита человека (ВИЧ);
- ◆ исследования *in vitro*;
- ◆ иммуномодулирующее действие ЭПОМ;
- ◆ ЭПОМ-зависимые гормональные механизмы продукции иммуноцитоклинов.

Некоторое недопонимание вызывало то обстоятельство, что ЭПОМ-LM по многим параметрам уподобляется профилактической противораковой вакцине. Он вводится п/к в группах высокого онкологического риска в год раз в чрезвычайно малых дозах – 0,002 г с предупредительной целью, а также для предотвращения рецидивов после проведенного комплексного и комбинированного лечения. В связи с этим позволю себе заметить, что не только в инфекционной патологии (туберкулез, пневмококковые инфекции, мозочная лихорадка, эпидемический менингит), но и при злокачественных опухолях становится правомерным понятие «протеиновая (пептидная) вакцина» (речь идет о находящихся на поверхности возбудителей этих инфекций, а также на раковых клетках белковых структур). С нашей исследовательской платформой по созданию профилактической противоопухолевой вакцины (в мире имеется около 300 терапевтических противораковых вакцин) непосредственно перекликаются работы по активации опухоль-ассоциированных пептидов [17]. Имеется и прямое указание на перспективность создания противораковых пептидных вакцин [19]. Аргументируется необходимость пересмотра устаревших представлений о канцерогенезе и возможности создания протеиновой противораковой вакцины. Думается, что пора отказаться от такой парадигмы мышления, когда о достижениях отечественных авторов громогласно заявляется лишь тогда, когда о них заговорят за рубежом.

Проведенные исследования на волонтерах (группа повышенного онкологического риска) и по противорецидивной иммунотерапии однозначно свидетельствуют о целесообразности внедрения ЭПОМ-LM в онкологическую практику.

Настоящую публикацию завершаю словами знаменитого врача-врачевателя средневековой Армении Мхи-

тара Гераци: «Противоположное лечи противоположным и доставь радость больному».

Резюме

1. Приоритетность профилактического направления в борьбе с раком становится все более очевидной. Это оправдано со многих точек зрения, в том числе, возникшей резистентностью раковых клеток к химиопрепаратам, равно, как и микроорганизмов к действию антибиотиков.
2. Неопластические клетки могут зародиться, тем более прижиться и бесконтрольно размножиться во «враждебной» внутренней среде организма только в том случае, если они окажутся в состоянии надежно защититься от атакующих факторов иммунитета.
3. Просматривается аналогия защитно-приспособительных реакций перманентно развивающихся у взрослых и пожилых людей раковых клеток с толерантностью материнского организма к вынашиваемому антигенно чуждому зародышу, являющемуся «полуаллогенным трансплантатом».
4. В многоликой каскадной цепи приспособительных реакций раковых клеток в борьбе за существование наиболее существенной составляющей, на наш взгляд, является экспрессия на их поверхности фетальных белков, благодаря чему имитируется развивающийся эмбрион и обеспечивается «статус максимального иммунологического благоприятствования».
5. Вторым уровнем защиты раковых клеток следует считать окутывание их фибриновой сетью. Таким путем раковые клетки уподобляются иммунонегативным общепатологическим процессам, в том числе тромбообразованию.
6. Покрываясь фетальными белками и окутываясь «фибриновым коконом», возникающие раковые клетки дезориентируют, вернее, «обходят» иммунный надзор и формируют устойчивое паразитирующее сообщество клеточных структур.
7. С развившейся, тем более, манифестирующей опухолью, когда пробит иммунологический барьер и раковые клетки выходят из-под контроля интегральных систем, бороться очень трудно. Не оправдались и надежды на генетически модифицированные (рекомбинантные, гибридные) индивидуальные вакцины на основе собственных раковых клеток.
8. В борьбе с раком главное – не курить, ограничить

контакт с канцерогенными агентами и придерживаться здорового образа жизни. Вместе с тем, нельзя не заметить, что в условиях усиливающегося техногенного загрязнения окружающей среды и других атрибутов урбанизации, приведших к иммунодепрессии, это оказалось недостаточным. Ослабли те естественные гомеостатические механизмы, которые закладывались в процессе многовековой эволюции.

9. Патогенетически обоснованным и безвредным путем восполнения ослабленной противоопухоле-

вой устойчивости является иммунизация взрослых и пожилых людей из групп высокого онкологического риска широким пулом нормальных фетальных белков, с которыми десятилетиями не сталкивалась их иммунная система. Эмбриональный противоопухолевый модулятор (ЭПОМ-ЛМ) по многим параметрам уподобляется профилактической протеиновой противораковой вакцине. ЭПОМ-ЛМ, как показали клинические наблюдения, показан и для предотвращения рецидивов после проведенного лечения.

ЛИТЕРАТУРА

1. Бородин Ю.И., Горчакова О.В., Горчаков В.М. Периферические лимфоидные структуры: образование и функции // Морфология, 2016, № 4, вып. 150, с. 90-96
2. Интервью С.П. Капицы с Л.Н. Мкртчяном. В борьбе с раком главное – предупреждение. «В мире науки» (Международный журнал, выходящий в 16 странах на 18 языках) 2013, № 1, с. 60-73
3. Казанский Д.Б., Силаева Ю.Ю., Калинина А.А., Замкова М.А., Хромах Л.М., Персиянцва Н.А., Джолохова Л.Х. Трансплантационный и специфический противоопухолевый иммунитет в ретроспективе: новые модели, основанные на трансгенезе индивидуальных цепей Т-клеточного рецептора // Успехи молекулярной онкологии, 2016-3-1, с. 14-27
4. Камерон И., Полинг Л. Рак и витамин С // Москва, Изд. «Кобра-Интернейшн», 2001, 333 с.
5. Мкртчян Л.Н. Концептуальные вопросы профилактической онкологии. Создание противораковой вакцины. Москва, Форте Пресс, 2012, 112 с.
6. Мкртчян Л.Н. На пути к созданию профилактической противораковой вакцины // «Бжшкунтун, Гитутюн, Кртутюн», Ереван, 2016, № 21, с. 3-23
7. Мкртчян Л.Н., Хачатурова Т.С., Шукурян С.Г. Об отложении фибрина на поверхности опухолевых клеток. Арх. патол., 1984, № 12, с. 56-60
8. Пальцев М.А., Волощук И.Н., Демидова Е.М. Иммунологические аспекты материнско-плодовых взаимоотношений // Вестник Российской АМН, 1999, № 5, с. 32-36
9. Andtbacka R., Kaufman H., Collichio F., Amatruda T., Senzer N., Chesney J., Delman K.A., Spittler L.E., Puzanov I., Agarwala S.S., Milhem M., Cranmer L., Curti B., Lewis K., Ross M., Guthrie T., Linette G.P., Daniels G.A., Harrington K., Middleton M.R., Miller W.H., Zager J.S., Ye Y., Yao B., Li A., Doleman S., Vander Walde A., Gansert J. and Coffin R. Talimogene Laherparepvec Improves Durable Response Rate in Patients with Advanced Melanoma. J. Clin. Oncol., 2015 Sep 1;33(25):2780-8 PMID:26014293
10. Anthony Gucciard. Deadly Cancer Drugs Make Cancer Worse and Kill Patients More Quickly (Natrul Society) Cancer Cell, January 2012, V. 21, Issue 1, 66-81
11. Campa D., Mergarten B., De Vivo I., Boutron-Ruault M.C., Racine A., Severi G., Nieters A., Katzke V.A., Trichopoulou A., Yiannakouris N., Trichopoulos D., Boeing H., Quirós J.R., Duell E.J., Molina-Montes E., Huerta J.M., Ardanaz E., Dorransoro M., Khaw K.T., Wareham N., Travis R.C., Palli D., Pala V., Tumino R., Naccarati A., Panico S., Vineis P., Riboli E., Siddiq A., Bueno-de-Mesquita H.B., Peeters P.H., Nilsson P.M., Sund M., Ye W., Lund E., Jareid M., Weiderpass E., Duarte-Salles T., Kong S.Y., Stepien M., Canzian F., Kaaks R. Cancer Leukocyte telomere length in relation to pancreatic cancer risk: a prospective study. Epidemiol. Biomarkers Prev., 2014 Nov;23(11):2447-54
12. Chen S.S., Hu Z., Zhong X.P. Diacylglycerol Kinases in T-Cell Tolerance and Effector Function. Front Cell Dev. Biol., 2016 Nov 10;4:130. Review
13. Huang P., Dai S., Ye Z., Liu Y., Chen Z., Zheng Y., Shao X., Lei L., Wang X. Long-term tolerance and cardiac function in breast cancer patients receiving trastuzumab therapy. Oncotarget, 2016 Nov 30. doi: 10.18632/oncotarget.13726
14. Hüsing A., Canzian F., Beckmann L., Garcia-Closas M., Diver W.R., Thun M.J., Berg C.D., Hoover R.N., Ziegler R.G., Figueroa J.D., Isaacs C., Olsen A., Viallon V., Boeing H., Masala G., Trichopoulos D., Peeters P.H., Lund E., Ardanaz E., Khaw K.T., Lenner P., Kolonel L.N., Stram D.O., Le Marchand L., McCarty C.A., Buring J.E., Lee I.M., Zhang S., Lindström S., Hankinson S.E., Riboli E., Hunter D.J., Henderson B.E., Chanock S.J., Haiman C.A., Kraft P., Kaaks R; BPC3. Prediction of breast cancer risk by genetic risk factors, overall and by hormone receptor status. J. Med. Genet., 2012 Sep;49(9):601-8
15. Jiang G.M., Wang H.S., Du J., Ma W.F., Wang H., Qiu Y., Zhang Q.G., Xu W., Liu H.F., Liang J.P. Bortezomib Relieves Immune Tolerance in Nasopharyngeal Carcinoma via STAT1 Suppression and Indoleamine 2,3-Dioxygenase Downregulation. Cancer Immunol. Res., 2017 Jan;5(1):42-51. doi: 10.1158/2326-6066.CIR-16-0102
16. Kim J.K., Jeon H.Y., Kim H. The molecular mechanisms underlying the therapeutic resistance of cancer stem cells. Arch. Pharm. Res., 2015 Mar; 38(3):389-401. doi: 10.1007/s12272-014-0531-1. Review
17. Kottke T., Shim K.G., Alonso-Camino V., Zaidi S., Maria Diaz R., Pulido J., Thompson J., Rajani K.R., Evgin L., Ilett E., Pandha H., Harrington K., Selby P., Melcher A., Vile R. Immunogenicity of self tumor associated proteins is enhanced through protein truncation. Mol. Ther. Oncolytics, 2016 Dec 7;3
18. Kuczma M., Ding Z.C., Zhou G. Immunostimulatory Effects of Melphalan and Usefulness in Adoptive Cell Therapy with Antitumor CD4+ T Cells. Crit. Rev. Immunol., 2016;36(2):179-191
19. Kumai T., Kobayashi H., Harabuchi Y., Celis E. Peptide vaccines in cancer-old concept revisited. Curr. Opin. Immunol., 2016 Dec 8;45:1-7. doi: 10.1016/j.coi.2016.11.001
20. Medawar P., Hunt R. Can fetal antigens be used for prophylactic immunization? Ciba Found Symp., 1983, 96, pp. 160-181
21. Metelli A., Wu B.X., Fugle C.W., Rachidi S., Sun S., Zhang Y., Wu J., Tomlinson S., Howe P.H., Yang Y., Garrett-Mayer E., Liu B., Li Z. Surface Expression of TGFβ Docking Receptor GARP Promotes Oncogenesis and Immune Tolerance in Breast Cancer Cancer Res., 2016 Dec 15;76(24):7106-7117
22. Mkrтчյան Л.Н. Embryonaliti and malignant growth: problems, creation of an anticancer vaccine // The new Armenian medical journal, 2008, V. 2, № 1, P. 36-55
23. Renowned Melanoma and Immunotherapy Expert Joins NYU Langone Medical Center Jeffrey S. Weber, MD, PhD, to serve as Deputy Director of the Laura and Isaac Perlmutter Cancer Center at NYU Langone, Co-Director of its Melanoma Program and Head of Experimental Therapeutics Sep 09, 2015, 13:12 ET from NYU Langone Medical Center
24. Sitko S.P., Mkrтчյան Л.Н. Introduction to quantum medicine. Kiev, Pattern, 1994, 127 с.
25. Taksler G.B., Perzynski A.T., Kattan M.W. Modeling Individual Patient Preferences for Colorectal Cancer Screening Based on Their Tolerance for Complications Risk. Med. Decis Making., 2016 Nov 22. pii: 0272989X16679161
26. Wang Z.Q., Johnson C.L., Kumar A., Molkentine D.P., Molkentine J.M., Rabin T., Mason K.A., Milas L., Raju U. Inhibition of P-TEFb by DRB suppresses SIRT1/CK2α pathway and enhances radiosensitivity of human cancer cells. Anticancer Res. 2014 Dec;34(12):6981-9

ԱՄՓՈՓՈՒՄ

ՔԱՂՑԿԵՂԱՅԻՆ ԲՋԻՋՆԵՐԻ ՆԿԱՏԱՎԱՐ ՀԱՆԴՈՒԹՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԻ ԱՏԵՂԾՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Մկրտչյան Լ.Ն.

ԵՊԲՀ, պիտաբանական անատոմիայի և կլինիկական մորֆոլոգիայի ամբիոն

Բանալի բառեր` *ՍՀՈՒՄ-LM, հանդուրժողականություն, սաղմնային պրոտեոգլիկաններ, ուռուցքային հիվանդացություն, կանխարգելիչ պատվաստանյութ:*

Մեծահասակների և տարեց մարդկանց շրջանում բնորոշ է քաղցկեղային բջիջների նկատմամբ իմունաբանական հանդուրժողականության առաջացումը: Նորագոյացող բջիջների մակերեսը պատվում է նորմալ սաղմնային ծագման սպիտակուցներով: Գոյատևելու համար քաղցկեղային

բջիջները նմանակում են զարգացող սաղմին, որի հանդեպ օրգանիզմը դրսևորում է «իմունաբանական առավելագույն բարենպաստ կարգավիճակ»:

Հանդուրժողականությունը վերացնելու և թուլացած դիմադրողականությունը բարձրացնելու նպատակով ստեղծվել է սաղմնային ծագման հակաուռուցքային մոդուլյատոր (ՍՀՈՒՄ-LM), որը մի շարք ցուցանիշներով համեմատվում է կանխարգելիչ հակաքաղցկեղային պատվաստանյութերի հետ:

SUMMARY

TOLERANCE TO CANCER CELLS IN THE LIGHT OF CREATION OF PROPHYLACTIC VACCINE

Mkrtchyan L.N.

YSMU, Department of Pathanatomy and Clinical Morphology

Keywords: *EATM-LM, tolerance, embryonic proteoglycan, oncological morbidity, prophylactic vaccine.*

The thesis of immunological tolerance to the cancer cells, which permanently arise in adults and elder people, is substantiated. The key mechanism of tolerance for the incipient antigenic foreign neoplastic cells is their expression of fetal proteins. In

this way, the cancer cells for the purpose of survival mimic the developing embryo, which the “immunological favored status” is manifested to.

With the aim of guiding this tolerance, an immunomodulator of embryonic genesis (EATM-LM) was created, which by a number of parameters is likened to a prophylactic anticancer vaccine.

ՀԻՎԱՆԴՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՍՆԵՐԿՈՒՄԱՏՆՅԱ ԱՂԻՔԻ ԹԱՓԱԾԱԿՎԱԾ ԽՈՑԻ ԼԱՊԱՐԱՍԿՈՊԻԿ ՄԻՋԱՄՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Ստեփանյան Ս.Ա., Պետրոսյան Ա.Ա., Հակոբյան Վ.Ս., Փափայան Կ.Տ., Եղիապարյան Յ.Յ., Ալեքսանյան Ա.Յու., Սաֆարյան Յ.Յ.

ԵՊԲՀ, վիրաբուժության թիվ 1 ամբիոն, «Արմենիա» ՀԲԿ, վիրաբուժության կլինիկա

Բանալի բառեր՝ պեպտիկ խոց, խոցային հիվանդության բարդություն, խոցի թափածակում, լապարասկոպիա:

Չնայած աշխարհում դիտվում է պեպտիկ խոցից մահացության զգալի նվազում, այնուամենայնիվ այդ հիվանդությունից 2010-ին մահերի գնահատված քանակը աշխարհում կազմել է մոտ 246 000 մարդ: Դա մոտ 7 անգամ ավելի է, քան ապենդիցիտից մահացությունը, զգալիորեն ավելի շատ է, քան որովայնային աորտայի պատռված անևրիզմից մահացությունը, գրեթե հավասար է տղամարդկանց շրջանում շազանակագեղձի քաղցկեղից և կանանց շրջանում ձվարանների, արգանդի վզիկի քաղցկեղից մահացությանը: Տարբեր մասնագետներ ներկայացնում են պեպտիկ խոցի դրսևորման հետևյալ հաճախությունը՝ 3,8-14 դեպք 100.000 բնակչի հաշվով. հիվանդների այս խմբում մահացությունը հասնում է մինչև 10-25%-ի [14,23]:

Ըստ այլ մասնագետների տվյալների՝ պեպտիկ խոցից մահացությունն ավելի քան 10 անգամ մեծ է, քան սուր ապենդիցիտից և սուր խլեցիստիտից [28]:

Աշխարհում պեպտիկ խոցերից մահերի մոտ 70%-ը թափածակման հետևանք է [4]:

Թափածակումների կապակցությամբ վիրահատությունների քանակը կայուն բարձր է մնում և ներկայումս կազմում է պեպտիկ խոցերի կապակցությամբ միջամտությունների ցուցումների 80%-ը [31]:

Որոշ մասնագետների կարծիքով պրոտոնային պոմպի ինհիբիտորների և Helicobacter pylori միկրոօրգանիզմի էրադիկացիոն թերապիայի արդյունավետության շնորհիվ թթվարտադրությունն ընկճող միջամտություններ սովորաբար չեն պահանջվում, և թափածակման դեպքում ճարպոնի եզրի կիրառմամբ պարզ կարումը գերադասելի միջամտություն է դարձել բազմաթիվ հիմնարկներում [19,27,30]:

Ուսումնասիրել են 1940-2012թթ. մասնագիտական գրականության տվյալները թափածակված խոցերի դեղորայքային և վիրաբուժական բուժման վերաբերյալ և հանգել այն եզրակացության, որ այս բարդության վերաբերյալ մինչ այժմ չկա ընդհանուր

կանոնակարգում [18]:

Nathanson-ը և համահեղինակներն առաջին անգամ լապարասկոպիկ եղանակով կարել են թափածակված պեպտիկ խոցը [20]:

Տասներկումատնյա աղիքի թափածակված խոցի՝ առանց կարի (ճարպոնով և ֆիբրինային սոսնձով) լապարասկոպիկ առաջին միջամտությունը կատարել են Mouret P.-ն և համահեղինակները [19]:

Թափածակված պեպտիկ խոցերի բուժման մեջ վիրահատության մեթոդը ընտրելիս և կանխատեսելիս կարևոր նշանակություն ունի ռիսկի գործոնները հաշվի առնելը: Որպես անառարկելի դրույթ ընդունելով այն փաստը, որ դեպի ազատ որովայնի խոռոչ պեպտիկ խոցի թափածակումով բոլոր հիվանդները ենթակա են վիրահատության՝ վիրաբույժները քննարկում են, թե որ դեպքերում կարելի է կատարել բաց, իսկ որ դեպքերում՝ լապարասկոպիկ վիրահատություն:

Պեպտիկ խոցի թափածակումների դեպքում ռիսկի գործոնները գնահատելու և բուժման ելքերը կանխատեսելու նպատակով առաջարկվել են 12 միավորային համակարգեր: Դրանցից առավել առանձնահատուկ են հետևյալ 4 համակարգերը՝ Boey միավորային համակարգը, Hacettepe միավորային համակարգը, Jabalpur միավորային համակարգը և PULP (Peptic Ulcer Perforation) միավորային համակարգը [26]:

Boey միավորային համակարգը առաջինն էր, որ թափածակված պեպտիկ խոցերի դեպքում նպատակաուղղված էր մահացության կանխատեսմանը: J.Boey-ը և համահեղինակները այս միավորային համակարգին վերաբերող բնօրինակում արձանագրել են, որ պեպտիկ խոցի թափածակումից հետո վիրահատությունը 48 ժամից ավելի ուշացնելը, շոկի առկայությունը հոսպիտալացման պահին և ծանր ուղեկցող հիվանդությունների առկայությունը հանգեցնում են մահվան 100%-ով (եթե այս բոլոր գործոններն առկա են) [5]:

Հետագայում Հոնկ Կոնգում իրականացված հետազոտության մեջ նշվել են Boey միավորային համակարգի 3 գործոնները՝ Նոր տարբերակով, հոսպիտալացման պահին սիստոլիկ զարկերակային

ճնշումը 90 մմ. սնդ. սյունից ցածր է, թափածակման ախտանիշերը առկա են 24 ժամից ավելի, ըստ հիվանդի վիճակի գնահատման ASA (American Society of Anesthesiologists) համակարգի գործակիցը 3 կամ 4 է: Boey միավորային համակարգը առավել նպատակաուղղված է լապարասկոպիայի համար թափածակմամբ հիվանդների ընտրությանը: Այն հնարավորություն է տալիս մինչև 93,8% ճշգրտությամբ որոշելու ելքերը այս ախտահարման բուժման դեպքում [6]:

Hacettepe միավորային համակարգն ընդգրկում է 4 գործոններ: Այն առաջին անգամ կիրառվել է Թուրքիայում 173 հիվանդների դեպքում և ներկայացվել է որպես Մանհայմի պերիտոնիտի ինդեքսին համարժեք համակարգ: Նշվել է, որ այս միավորային համակարգի զգայունությունն (83%) ավելի բարձր է, քան Մանհայմի պերիտոնիտի ինդեքսի զգայունությունը (75%) [2, 16]:

Jabalpur միավորային համակարգը կիրառվել է Ջնդկաստանում 140 հիվանդների հետազոտության ժամանակ: Այն հաշվի է առնում 6 գործոններ, որոնք բոլորը հնարավոր է գնահատել մինչ վիրահատությունը: Համակարգը հնարավորություն է տալիս ճշտորեն կանխագուշակելու մահացությունը և բարդությունները [16]:

Համեմատաբար վերջին շրջանում սկսել է կիրառվել PULP (Peptic Ulcer Perforation) միավորային համակարգը, որն առաջարկվել է Դանիայում կատարված հետազոտության արդյունքում: Հետազոտությունն ընդգրկել է 2668 հիվանդներ, որոնցից 55%-ը եղել է կին, իսկ միջին տարիքն էր 70,9տ.: Այս միավորային համակարգում հաշվի են առնվել 7 գործոններ, իսկ յուրաքանչյուր գործոնի կշիռը չափվել է առավելագույնը 18 կետերով [17]:

ASA միավորային համակարգն ամենահինն է նշված համակարգերի մեջ, առաջարկվել է 1941-ին: Այն նպատակաուղղված է հիվանդի նախավիրահատական վիճակը գնահատելու համար: Այս միավորային համակարգը սովորաբար կիրառվում է այլ ցուցանիշերի հետ, ինչպիսիք են տարիքը, սեռը և այլ ֆիզիոլոգիական ցուցանիշեր: Հեղինակներն ընդունում են, որ այս համակարգը սպեցիֆիկ չէ թափածակված պեպտիկ խոցերի դեպքում [21, 29]:

Նպատակը

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել կանխատեսման միավորային համակարգերի կիրառումը տասներկուամտևյա աղիքի թափածակված խոցերի վիրահատության մեթոդի ընտրության ժամանակ:

Նյութը և մեթոդները

«Արմենիա» հանրապետական բժշկական կենտրոնի վիրաբուժության կլինիկայում 2010թ. ապրիլ-2017թ. հունիս ամիսներին կատարվել են 117 վիրահատություններ (53 լապարասկոպիկ, 64 որովայնահատմամբ) տասներկուամտևյա աղիքի թափածակված պեպտիկ խոցի կապակցությամբ: Հիվանդներից 105-ը եղել է տղամարդ, 12-ը՝ կին: Միջին տարիքը կազմել է 47տ. (18-89տ. միջակայքում):

Թափածակման կլինիկան արտահայտվել է էպիգաստրալ շրջանում տարբեր ուժգնության հանկարծակի ցավով և այդ ցավի՝ դեպի որովայնի ստորին հատվածներ տարածմամբ: Հիվանդներից միայն 23-ն (20%) է նշել անամնեզում 12-մտևյա աղիքի խոցային հիվանդության առկայություն: Վիրահատվածներից 73-ի (62%) դեպքում թափածակումը եղել է խոցային հիվանդության առաջին արտահայտությունը: Հիվանդներից 21-ը (18%) նշում էին նախկինում խոցային հիվանդությանը բնորոշ զանգատներ, սակայն չէին ենթարկվել որևէ հետազոտության:

Կլինիկա ընդունվելուց հետո հիվանդներն անցել են ստանդարտ լաբորատոր հետազոտություններ՝ արյան ընդհանուր և կենսաքիմիական քննություն, էլեկտրասրտագրություն, որովայնի սոնոգրաֆիա, կրծքավանդակի և որովայնի խոռոչի շրջադիտակային ռենտգենաբանական հետազոտություն: Մի մասին կատարվել է նաև որովայնի ՀՀ, մարսողական ուղու ցայտերանգային (կոնտրաստ) ռենտգենաբանական հետազոտություն ջրայույծ կոնտրաստ նյութով, էզոֆագոգաստրոդուդենոսկոպիա (որոշ դեպքերում վիրահատական սեղանի վրա ընդհանուր անզգայացումը սկսելուց հետո):

Կլինիկա ընդունվելիս ուշադրություն է դարձվել այնպիսի ցուցանիշերի, ինչպիսիք են զարկերակային ճնշման մակարդակը, թափածակումից մինչև հոսպիտալացում եղած ժամանակահատվածը, ուղեկցող հիվանդությունների առկայությունը: Այս ցուցանիշերը նախավիրահատական հետազոտությունների արդյունքների համադրությամբ կիրառվել են մինչև վիրահատական ռիսկի գործոնները որոշելու համար:

Հիմնականում հիվանդները վիրահատվել են կլինիկա ընդունվելուց հետո մոտ 2 ժամվա ընթացքում: Վիրահատությունները կատարվել են ընդհանուր ներշնչափողային անզգայացմամբ:

Լապարասկոպիկ միջամտություններն իրականացվել են Լյոյդ-Դեվիսի («ֆրանսիական») դասավորությամբ՝ սեղանին տալով Ֆոուլերի

(Տրենդէլենբուրգին հակառակ) դիրք: Կիրառվել են «Karl Storz» լապարասկոպիկ համակարգը («Karl Storz», Tuttlingen, Germany), նույն ֆիրմայի արտադրության գործիքներ: Դիտակի տրոակարը տեղադրվել է ինչպես պորտի, այնպես էլ աջ թուլակողի շրջանում: Վերջին դիրքը հնարավորություն է տվել ապահովելու խոցի շրջանի առավել լավ տեսանելիություն, շրջանցելու լատերալ կողմից լյարդի 3-րդ սեգմենտի եզրը: Լյարդի ռետրակտորի համար աջ կողադեղից ներքև տեղադրվել է տրոակար: Գործիքների տրոակարները տեղադրվել են աջ թուլակողում առաջային անութային գծով և ձախ մեզոգաստրալ շրջանում միջանրակային գծով: Բոլոր վիրահատությունների ժամանակ կիրառվել է 45° դիտակ:

Բաց վիրահատությունների ժամանակ կատարվել է վերին միջային որովայնահատում:

Խոցը կարելու համար կիրառվել են մոնֆիլամենտ ներծծվող թելեր՝ PDS 3-0 և «Կապրոֆիլ» 3-0 36 մմ երկարությամբ ծակող ասեղով: Լապարասկոպիկ վիրահատությունների ժամանակ թափածակման բացվածքը կարվել է մեկ կամ երկու կարերով՝ ճարպոնի ազատ եզրը կարի մեջ վերցնելով կամ առանց այդ: Թափածակված խոցի եզրերը նաև հեռացվել են, թարմացվել և կարվել: Կիրառվել են կարելուց հետո հանգույցի ձևավորման ինչպես ինտրակորպորալ, այնպես էլ էքստրակորպորալ մեթոդը: Կարի հերմետիկությունը ստուգվել է ստամոքսի մեջ օդ լցնելու և ճնշում ստեղծելու միջոցով:

Որովայնահատմամբ կատարված վիրահատությունների դեպքում, ի թիվս թափածակված խոցի վրա վերը նշված միջամտությունների, նաև խոցը հեռացվել է և դեֆեկտը կարվել հանգուցակարերով: Վիրահատության ժամանակ որովայնի խոռոչը լվացվել է ֆիզիոլոգիական լուծույթով, բոլոր հատվածներից կատարվել են էքստրակորպորալ ասպիրացիա և դրենավորում հիմնականում 4 դրենաժներով՝ դեպի ենթալյարդային, աջ և ձախ ենթաստոծանային և փոքր կոնքի շրջաններ: Բոլոր հիվանդներին վիրահատության ժամանակ դրվել է նազոգաստրալ զոնդ և այն պահվել է նվազագույնը 24-48 ժամ:

Չետվիրահատական շրջանում հիվանդները ստացել են ինֆուզիոն թերապիա, լայն սպեկտրի հակաբիոտիկներ, ներերակային պրոտոնային պոմպի ինհիբիտորներ: Դրենաժները հեռացվել են հետվիրահատական 2-4-րդ օրերին: Չետվիրահատական շրջանում հիվանդները ստացել են հակախոցային բուժում:

Չետագոտությունների տվյալները մշակվել են MS Excel 2007 (Microsoft Corp., USA) ծրագրով: Եթե p-ի

արժեքը եղել է 0,05-ից փոքր, ապա այն նշանակել է վիճակագրորեն հավաստի:

Արդյունքները

Չետագոտության տվյալները ներկայացված են աղյուսակ 1-ում: Լապարասկոպիայի խմբում 10 հիվանդներ անամնեզում նշել են որովայնային վիրահատություններ, նրանցից 8-ը տարել են բաց ապենդեկտոմիա, երկուսը՝ աճուկային ճողվածքի ռադիկալ վիրահատություն: Որովայնահատման խմբում անամնեզում տարած վիրահատություններ են նշել 17 հիվանդներ. 3 հիվանդներ նախկինում տարել են 12-մասնյա աղիքի թափածակված խոցի կարում, 8 հիվանդներ՝ ապենդեկտոմիա, 2 հիվանդներ՝ ապենդեկտոմիա և ճողվածքի ռադիկալ վիրահատություն, 1 հիվանդ՝ սուր բարակաղիքային անանցանելիություն, 1 հիվանդ՝ արզանդի հեռացում, 1 հիվանդ՝ խլեցիստեկտոմիա, 1 հիվանդ վիրահատվել է որովայնի թափանցող վնասվածքի կապակցությամբ:

Որովայնի խոռոչի շրջադիտակային ռենտգենաբանական հետազոտությամբ 80-ի (68%) դեպքում (14-ի (12%) դեպքում կրկնակի հետազոտությամբ) հայտնաբերել է պնևմոպերիտոնեում, 37-ի (32%) դեպքում որովայնի խոռոչում հետազոտությամբ գազ չի հայտնաբերվել:

Վիրահատվածներից 87-ի դեպքում հայտնաբերվել է ընդհանուր պերիտոնիտ՝ ամբողջ որովայնում թարախալեղային պարունակությամբ և ֆիբրինի փառերով, 30-ի դեպքում հայտնաբերվել է նվազ արտահայտվածության տարածուն պերիտոնիտ: Հիվանդներից միայն 75-ն են ընդունվել կլինիկա թափածակումից հետո առաջին 6 ժամերի ընթացքում: Որովայնահատման խմբում 18 հիվանդների դեպքում հոսպիտալացման պահին եղել են սեպտիկ շոկի նշաններ, 22 հիվանդներ ընդունվել են թափածակման առաջին ախտանիշներից 24 ժամ անց, 15-ի դեպքում եղել են ծանր սիրտ-անոթային և շնչառական հիվանդություններ, 13-ի դեպքում եղել են ուղեկցող այլ հիվանդություններ:

Լապարասկոպիայի խմբում թափածակված խոցի պարզ կար դրվել է 15-ի դեպքում, կար ճարպոնի ազատ եզրով տամպոնադայով՝ 38-ի դեպքում: Վիրահատություններից 27-ի (51%) դեպքում կիրառվել է հանգույցի ձևավորման ինտրակորպորալ, իսկ 26-ի (49%) դեպքում էքստրակորպորալ մեթոդը:

Որովայնահատման խմբում 8 հիվանդների դեպքում կատարվել է խոցի պարզ կարում, 53-ի դեպքում՝ կարում ճարպոնի ազատ եզրով տամպոնադայով, 3-ի դեպքում՝ խոցի հեռացում և կարում:

Աղյուսակ 1

Լապարասկոպիայի և որովայնահատման խմբերի հիվանդների ցուցանիշերի համեմատական բնութագիրը.

Նյութը, մեթոդները և արդյունքները					
Վիրահատության եղանակ	Լապարասկոպիա 53(45.3%)	Որովայնահատում 61(52.1%)	Կոնվերսիա 3(2.6%)	P	
Օտսումնասիրվող ցուցանիշ					
տղամարդ	52 (98%)	50 (82%)	3 (100%)	0,015116	Chi_test
միջին տարիք	40 (18-63) ± 12,6	53 (19-89) ± 17,3	49 (48-50) ± 1,2	3,65E-05	F_test
թափածակումից հոսպիտալիզացիա	3,9 ժամ (0,4-12)	24 ժամ (0,7-240)	3,3 ժամ (2-5)	0,002736	F_test
նուրբկցող հիվանդություններ	7 (13,2%)	27 (44,3%)	1 (33,3%)	0,001457	Chi_test
սիրտ-անոթ. կամ շնչ. համակարգի հիվանդություններ	2 (3,8%)	15 (24,6%)	0 (0%)	0,005464	Chi_test
որովայնի խոռոչի կամ պատի վիրահատություններ	10 (18,9%)	17 (27,9%)	0 (0%)	0,329888	Chi_test
սիստոլիկ ճնշումը ցածր կամ հավասար 90 մմ.սնդ. սյն.	6 (11,3%)	18 (29,5%)	1 (33,3%)	0,053781	Chi_test
ASA E				0,00064	Chi_test
I	5 (9,4%)	1 (1,6%)	0 (0%)		
II	24 (45,3%)	9 (14,8%)	1 (33,3%)		
III	21 (39,6%)	28 (45,9%)	2 (66,7%)		
IV	3 (5,7%)	20 (32,8%)	0 (0%)		
V	0 (0%)	3 (4,9%)	0 (0%)		
Boey				7,87E-06	Chi_test
0	25 (47,2%)	8 (13,1%)	1 (33,3%)		
1	26 (49%)	23 (37,7%)	1 (33,3%)		
2	2 (3,8%)	22 (36,1%)	1 (33,3%)		
3	0 (0%)	8 (13,1%)	0 (0%)		
բարդություններ	6 (11,3%)	29 (47,5%)	0 (0%)	7,26E-05	Chi_test
կրկնակի վիրահատություն	0 (0%)	6 (9,8%)	0 (0%)	0,05486	Chi_test
հոսպիտալիզացիա (վիրահատություն-տուն)	4,8 օր (3-14) ±2,3	12 օր (6-63) ±9,6	9,3 օր (8-10) ±1,2	5,09E-06	F_test
մահ	1 (1,9%)	18 (29,5%)	0 (0%)	0,000261	Chi_test

*-ASA - American Society of Anesthesiologists.

-Chi_test - Chi-square test.

-F_test - Fishers exact test.

Երեք դեպքերում վիրահատությունը սկսվել է լապարասկոպիկ, սակայն կատարվել է կոնվերսիա թափածակման տեղի հայտնաբերման դժվարության (1 դեպք) և թափածակման անցքը կարելու տեխնիկական դժվարությունների պատճառով (2 դեպք):

Լապարասկոպիկ վիրահատություններ տարած հիվանդները եղել են ավելի երիտասարդ, թափածակումից մինչև հոսպիտալացումն ընկած ժամանակահատվածը եղել է ավելի կարճ, նրանք մեծ մասամբ ASA I, II կամ III դասին են պատկանել: ASA IV և V դասերին վերաբերող հիվանդները մեծ մասամբ տարել են բաց վիրահատություններ: Լապարասկոպիայի խմբում ընդգրկվել են մեծ մասամբ Boey 0 և 1 միավորներ ունեցող հիվանդներ, որովայնահատման խմբում՝ Boey 1 և 2 միավորներ ունեցող հիվանդներ: Լապարասկոպիայի խմբում հետվիրահատական ներստացիոնար մահվան մեկ դեպք է գրանցվել սիրտ-անոթային անբավարարության պատճառով (Boey 1 միավոր), որովայնահատման խմբում՝ 18 դեպքեր (Boey 3 միավոր՝ 7 դեպքեր, Boey 2 միավոր՝ 10 դեպքեր, Boey 1 միավոր՝ 1 դեպք):

Որովայնահատման խմբում մահվան պատճառ են եղել սիրտ-անոթային բարդությունները՝ 9-ի դեպքում, թոքային բարդությունները՝ 5-ի դեպքում, հետվիրահատական բարդությունները՝ 4-ի դեպքում: 5 հիվանդների դեպքում կրկնակի վիրահատության կարիք է եղել: Մեկական դեպքերում կատարվել են ստամոքսի մասնահատում դեկոմպենսացված ստենոզի պատճառով, ախտորոշիչ լապարասկոպիա, որովայնի խոռոչի սանացիա և դրենավորում, կպումների անջատում կպումային անանցանելիության պատճառով: Երեք դեպքերում կատարվել է ռելապարատոմիա և սնուցող յեյունոստոմայի ձևավորում: Ռեզիդուալ ներորովայնային թարախակույտ չի ձևավորվել:

Լապարասկոպիայի խմբում ստացիոնար բուժման տևողությունը եղել է ավելի կարճ (4,8 օր), քան որովայնահատման խմբում (12 օր) ($p < 0,001$):

Քննարկումը

Վերջին տասնամյակներին աշխարհում դիտվում է պեպտիկ խոցով հիվանդացության նվազում, որը մասնավորապես կարելի է բացատրել *Helicobacter pylori*-ի էրադիկացիայով և պրոտոնային պոմպի ինհիբիտորների լայն կիրառմամբ [8, 11, 28], սակայն չի նկատվել խոցային հիվանդության բարդությունների նվազում [10]:

Այդ բարդություններից առավել վտանգավորը և անհետաձգելի վիրահատական բուժում պահանջողը

թափածակումն է:

Համեմատվել են թափածակված պեպտիկ խոցի լապարասկոպիկ և բաց վիրահատություններ տարած 50-ական հիվանդների բուժման արդյունքները: Լապարասկոպիայի խմբի հիվանդները եղել են ավելի երիտասարդ, ֆունկցիոնալ՝ ավելի լավ վիճակում, ունեցել են ASA-ի ավելի ցածր աստիճան, նախավիրահատական սեպսիսի ավելի ցածր հաճախություն: Հեղինակների հետազոտությունը բաց վիրահատության հետ համեմատ ցույց է տվել լապարասկոպիկ միջամտությունների արդյունքների բարելավում պեպտիկ խոցերի թափածակումների դեպքում: Նրանց կարծիքով հետվիրահատական ստացիոնար բուժման տևողությունը և դեղորայքի ծախսը նվազել են այն հիվանդների դեպքում, ովքեր չեն ունեցել ուղեկցող հիվանդություններ, ASA կարգը եղել է 3-ից ցածր, չի եղել նախավիրահատական սեպսիս [7]:

Եվրոպայում և Ասիայում թափածակված պեպտիկ խոցերի լապարասկոպիկ վիրահատությունների վերաբերյալ բազմաթիվ աշխատանքներում ցույց են տրվել այս մեթոդի անվտանգ և ընդունելի լինելը, այնպիսի առավելություններ, ինչպիսիք են հետվիրահատական ստացիոնար բուժման տևողության կրճատումը և հետվիրահատական շրջանում անալգետիկների քիչ կիրառումը [3, 12, 24]:

Որոշ հեղինակների կարծիքով թափածակված պեպտիկ խոցերը կարելիս ապացույցները բավարար չեն որովայնահատման նկատմամբ լապարասկոպիային առավելություն տալու համար: Այժմ դա մի շարք նվիրյալ բժիշկների հետազոտությունների և պրակտիկ աշխատանքի արտահայտությունն է, և մեծ մասամբ չեն հայտնաբերվել երկու նշված մեթոդների հակադիր /առավել կամ նվազ արդյունավետության/ արդյունքներ [9, 25]:

Թափածակված խոցերի լապարասկոպիկ վիրահատությունների արդյունքները մեծապես պայմանավորված են հիվանդների ընտրությամբ: Ընտրողական մոտեցումն այս դեպքում կանխարգելում է ներ- և հետվիրահատական բարդությունները, որոնք պայմանավորված են սիրտ-անոթային և շնչառական համակարգերի հիվանդություններով:

Թափածակված պեպտիկ խոցերի դեպքում լապարասկոպիան փորձված վիրաբույժներն առավել հաճախ կիրառում են այն դեպքերում, երբ հիվանդը ծանր չէ և բուժման արդյունքը կանխատեսելի է [25]:

Մասնագիտական ասոցիացիաների ուղեցույցներում նշված է, որ թափածակված պեպտիկ խոցերի բուժման մեջ լապարասկոպիան կիրառվում է որոշ ընտրողական դեպքերում՝ ընտրված հիվանդների

դեպքում [1,22]:

Այս դեպքում անհրաժեշտություն է առաջանում ստեղծելու լապարասկոպիայի համար հիվանդների ընտրության գործոն՝ արդյունավետ և պարզ մեխանիզմ, որը հնարավորություն կտա ճիշտ իրականացնելու նախավիրահատական ընտրությունը և բարելավելու բուժման արդյունքները:

Ուսումնասիրել են 2000-2012թթ. աշխատանքները, որոնք վերաբերում են թափածակված խոցով հիվանդների մահացության և բարդությունների կանխագուշակման միավորային համակարգերին: Թափածակված խոցերի դեպքում առաջարկված են վիճակի գնահատման և կանխագուշակման 12 միավորային համակարգեր [26]:

Առաջարկված միավորային համակարգերը տարատեսակ են, որոշ համակարգեր բարդ են կամ նախատեսված չեն ընտրելու թափածակված խոցերով հիվանդների վիրահատության տվյալ տեսակի կամ բուժման արդյունքները կանխագուշակելու համար, ինչպես, օրինակ՝ ASA միավորային համակարգը:

Վերը նշված միավորային համակարգերից թափածակումների համար սպեցիֆիկ է և կիրառմամբ պարզ Boey միավորային համակարգը:

Boey գործակիցն ի սկզբանե առաջարկվել է թափածակված պեպտիկ խոցերի բարդությունները և մահացության հավանականությունը գնահատելու նպատակով, սակայն ներկայումս այն կիրառվում է նաև լապարասկոպիայի դեպքում հիվանդների ընտրության

նպատակով [13,15]:

Որոշ հեղինակների կարծիքով Boey գործակիցը 3 լինելու դեպքում առկա է հակացուցում լապարասկոպիայի համար [3]:

Ըստ վերը նշվածի՝ մեր աշխատանքում նախավիրահատական հետազոտություններից հետո մինչ վիրահատությունը հիվանդները գնահատվել են Boey միավորային համակարգի միջոցով: Լապարասկոպիկ եղանակով վիրահատելու համար ընտրվել են հատկապես այն հիվանդները, որոնց Boey միավորները եղել են 0 կամ 1, չնայած այն հանգամանքին, որ մեր պոպուլյացիայում Boey 0 միավորով քիչ հիվանդներ են դիմում հիվանդանոց: Մեր աշխատանքում լապարասկոպիկ եղանակով վիրահատելու համար չեն ընտրվել այն հիվանդները, որոնց Boey միավորը եղել է 3: Boey 3 միավորով բոլոր 8 հիվանդներին կատարվել է որովայնահատում և թափածակված խոցի կարում բաց մեթոդով: Որովայնահատման խմբում Boey 3 գործակցով հիվանդների դեպքում ավելի հաճախ են դիտվել հետվիրահատական բարդություններ, և 18 մահերից 7-ը բաժին է ընկել այս խմբին:

Այսպիսով, Boey միավորային համակարգի կիրառումը հնարավորություն է տվել նվազագույնի հասցնելու ներ- և հետվիրահատական բարդությունների ռիսկերը լապարասկոպիկ եղանակով վիրահատվողների խմբում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Agresta F., Ansaloni L., Baiocchi G.L., Bergamini C., Campanile F.C., Carlucci M. Laparoscopic approach to acute abdomen from the Consensus Development Conference of the Societa Italiana di Chirurgia Endoscopica e nuove tecnologie (SICE), Associazione Chirurgi Ospedalieri Italiani (ACOI), Societa Italiana di Chirurgia (SIC), Societa Italiana di Chirurgia d'Urgenza e del Trauma (SICUT), Societa Italiana di Chirurgia nell'Ospedality Privata (SICOP), and the European Association for Endoscopic Surgery (EAES). *Surg. Endosc.*, 2012, 26: 2134-2164
2. Altaca G., Sayek I., Onat D., Cakmakci M., Kamiloglu S. Risk factors in perforated peptic ulcer disease: comparison of a new score system with the Mannheim Peritonitis Index. *Eur. J. Surg.*, 1992, 158(4):217-221
3. Bertleff MJ., Lange J.F. Laparoscopic correction of perforated peptic ulcer: first choice? A review of literature. *Surg. Endosc.*, 2010, 24(6): 1231-1239
4. Bertleff MJ., Lange J.F. Perforated peptic ulcer disease: a review of history and treatment. *Dig. Surg.*, 2010, 27: 161-169
5. Boey J., Choi S.K., Poon A., Alagaratnam T.T. Risk stratification in perforated duodenal ulcers. A prospective validation of predictive factors. *Ann. Surg.*, 1987, 205: 22-26
6. Boey J., Wong J., Ong G.B. A prospective study of operative risk factors in perforated duodenal ulcers. *Ann. Surg.*, 1982, 195(3): 265-269
7. Byrge N., Barton R.G., Ennis T.M., Nirula R. Laparoscopic versus open repair of perforated gastroduodenal ulcer: a National Surgical Quality Improvement Program analysis. *The American Journal of Surgery*, 2013, 206, 957-963
8. Dutta A.K., Chacko A., Balekuduru A., Sahu M.K., Gangadharan S.K. Time trends in epidemiology of peptic ulcer disease in India over two decades. *Indian J. Gastroenterol.*, 2012, 31: 111-115
9. Kuwabara K., Matsuda S., Fushimi K., Ishikawa K.B., Horiguchi H., Fujimori K. Community-based evaluation of laparoscopic versus open simple closure of perforated peptic ulcers. *World J. Surg.*, 2011, 35: 2485-2492
10. Lassen A., Hallas J., Schaffalitzky de Muckadell O.B. Complicated and uncomplicated peptic ulcers in a Danish country 1993-2002: a population-based cohort study. *Am. J. Gastroenterol.*, 2006, 101: 945-953
հարթ կոնտակտային մակերեսով լազերային ինտերֆեյսերի և ավանդական միկրոկերատոմների համեմատ: Արդյունքում հնարավորություն է ընձեռվում ստանալու լաթի ձևավորման ֆիզիոլոգիական կտրվածք: Մեթոդը ներառում է նաև լաթի ոտիկի և տրամագծի փոփոխման հնարավորություն, որ իր հերթին հնարավոր է դարձնում դրա կիրառությունը բարակ եղջերենու դեպքում:

Լաթի ձևավորման ճշգրտության և կանխատեսելիություն: Ըստ մի շարք հետազոտությունների արդյունքների՝ լաթի ձևավորման ճշգրտության, դրա կանխատեսելիության և վերարտադրելիության առավելություններն ակնհայտ են միկրոկերատոմային եղանակով ստացված լաթերի նկատմամբ [8, 18]:

Լաթի կայունություն, Էպիթելային ներած և ստրոմալ մակերես: FS լազերային տեխնոլոգիան հնարավորություն է տալիս ստանալու ավելի նուրբ և հարթ լաթ (100–110մկմ)՝ միկրոկերատոմի կիրառմամբ ստացվող կիսալուսնաձև լաթի համեմատ, որն ունի կենտրոնական բարակ և ծայրամասային ավելի հաստ հատվածներ [6]: FEMTO LASIK եղանակով ստացված լաթերն ունեն ճշգրիտ տրամագիծ և հաստություն, որ հաստատուն պահպանվում է լաթի ողջ երկայնքով [3]: Դա նաև հնարավորություն է տալիս ստանալու լաթի առավել կայունություն և իջեցնելու կլինիկորեն նշանակալի Էպիթելային ներածը: Մեկ այլ կարևոր առավելություն է լամելյար (թաղանթային) լաթ վերականգնելու հնարավորությունը, որ կարիքը կարող է առաջանալ տեխնիկական անսարքությունների հետևանքով: Այսպիսով, տեխնոլոգիան է միկրոկերատոմի կիրառման բարդությունների շտկման հնարավորություն ընձեռում:

Կենսամեխանիկական կայունություն: FS լազերային տեխնոլոգիան է ավելի բարակ լաթեր ստանալու հնարավորություն ընձեռում, որ նվազագույնս է վնասում ստրոմալ կառուցվածքները: Ավելին՝ օվալ լաթերի ստացման առավելությունը հնարավորություն է տալիս ավելի քիչ թաղանթներ վնասել ուղղահայաց առանցքով՝ այսպիսով մեծացնելով լաթի կայունությունը [2, 7, 9]:

Տեսողության որակը: FS լազեր կիրառելու դեպքում բարձրակարգ աբերացիաներ չեն գրանցվում, մինչդեռ միկրոկերատոմային եղանակով ստացված լաթերի դեպքում դրանք հաճախ են պատահում [15]: Ավելին՝ FS լազերի կիրառման դեպքում են գրանցվում ավելի լավ կոնտրաստային զգայունություն և բարձր տարածական հաճախականություններ և՛ ֆոտոպիկ, և՛ սկոպիկ պայմաններում [5]:

Միօպիայի բուժման կայունություն:

Ժամանակակից մասնագիտական գրականության տվյալները փաստում են, որ ռեֆրակցիոն միջամտության նպատակով FS լազերի և միկրոկերատոմային եղանակի կիրառման արդյունքները համեմատելիս FS լազերային եղանակի դեպքում գրանցվում են տեսողության սրության ավելի լավ արդյունքներ և հետվիրահատական մնացորդային աստիգմատիզմի ցածր ցուցանիշներ, քան միկրոկերատոմային եղանակի դեպքում [1]: Ավելին՝ հետվիրահատական տեսողության սրության ստացված ցուցանիշներն առավել կայուն են FS լազերային եղանակ կիրառելու դեպքում 1, 3, 6 և 12 ամիս դիսամիկ հսկողությամբ [4]:

Չոր աչքի ախտանիշի պակասեցում:

Թեև մինչ օրս այս ախտանիշը գրանցվում է LASIK միջամտություն անցած հիվանդների մինչև 90%-ի մոտ [16], սակայն FS լազերային եղանակ կիրառելու դեպքում գրանցվում են չոր աչքի ախտանիշի, ինչպես նաև մակերեսային կետային էպիթելային էրոզիաների ավելի քիչ դեպքեր [11]:

FEMTO LASIK տեխնոլոգիան հնարավորություն է ընձեռում ավելի ապահով, ճշգրիտ և արագ կատարելու էքսիմեր-լազերային վիրահատություններ՝ կանխատեսելի արդյունքներով: Ավելին՝ լազերային շտկման Նորագույն մեթոդի՝ FEMTO LASIK-ի կիրառման շնորհիվ հնարավորություն է ստեղծվում միջամտություն կատարելու վիրահատության համար հակացուցումներ ունեցող աչքում, մասնավորապես եղջերաթաղանթի անատոմիական կառուցվածքի և խիստ կարճատեսության, ինչպես նաև պախիմետրիայի վատ ցուցանիշների դեպքում:

Հետազոտության նպատակը

Սույն հետազոտության նպատակը FEMTO LASIK ռեֆրակցիոն միջամտության արդյունավետությունը գնահատելն է:

Մեթոդները

Հետազոտություն անցկացնելու նպատակով պատահականության սկզբունքով ընտրվել են 74 հիվանդների վիրահատության պատմություններ, որոնց

դեպքում Ս.Վ. Մալայանի անվան ակնաբուժական կենտրոնի ռեֆրակցիոն վիրաբուժության բաժանմունքում 2014-2016 թթ. իրականացվել է FEMTO LASIK ռեֆրակցիոն միջամտություն: Կենտրոնում 2014-ից ի վեր ներդրվել և գործում է FS-200 WaveLight Femto-վայրկյանային լազերային տեխնոլոգիան (Wave Light FS 200 Laser System, Alcon Laboratories, Inc.):

Ընդգրկվել են հիվանդների նախավիրահատական հետազոտությունների, ինչպես նաև հետվիրահատական ցուցանիշների և դիսամիկ հսկողության տվյալները, իրականացվել է տվյալների հավաքագրում SPSS 16.0 տվյալների բազա և հետագա վերլուծություն:

Սույն հետազոտությունը համապատասխանում է Բիոէթիկայի ինստիտուցիոնալ կոմիտեի դրույթներին և Յելսինյան դեկլարացիայի սկզբունքներին:

Արդյունքները

Ըստ հետազոտության արդյունքների՝ 2014-2016 թվականների ընթացքում FEMTO LASIK տեխնոլոգիայով պատահականության սկզբունքով ընտրված 74 հիվանդների դեպքում կատարվել է աչքի ռեֆրակցիոն ընդհանուր **133** միջամտություն:

Հիվանդների միջին տարիքը կազմել է 29,3±7,5 տարի: Հիվանդներից 39-ը (52,7%) կին է և 35 (47,3%)՝ տղամարդ: Նրանցից 33-ը (44,6%) երևանից է:

Պախիմետրիայի միջին ցուցանիշներն են. (աղ. 1)՝

Աղյուսակ 1.

FEMTO LASIK տեխնոլոգիայով ռեֆրակցիոն միջամտության ենթարկված հիվանդների պախիմետրիայի միջին ցուցանիշները

Պախիմետրիայի միջին ցուցանիշներ (N=133)	
Կենտրոնական	511,9±45,9
Հարկենտրոնական	547,1±41,3
Պերիֆերիկ	600,5±37,1

Կերատոմետրիայի միջին ցուցանիշներն են (աղ. 2)՝


Աղյուսակ 2.

FEMTO LASIK տեխնոլոգիայով ռեֆրակցիոն միջամտության ենթարկված հիվանդների կերատոմետրիայի միջին ցուցանիշները

	Կերատոմետրիայի տվյալներ (N=133)	
	Mm	D
K1	8,0±0,3	42,3±1,5
K2	7,6±0,3	44,4±1,6

Ռեֆրակցիայի միջին ցուցանիշը վիրահատությունից առաջ կազմել է $(\pm)5,6 \pm (\pm)2,8$ D (սվազագույնը՝ 1,0; առավելագույնը՝ 14,0) :


Հիվանդների ռեֆրակցիայի աստիճանը եղել է՝ ցածր՝ 3 (2,3%), միջին՝ 51 (38,3%) և բարձր՝ 79 (59,4%) (նկ. 1):



Նկար 1. FEMTO LASIK տեխնոլոգիայով ռեֆրակցիոն միջամտության ենթարկված հիվանդների ռեֆրակցիայի աստիճանը ըստ մասնաբաժինների:

FEMTO LASIK ռեֆրակցիոն միջամտություն անցած հիվանդներից աստիզմատիզմ դիտվել է 94,7%-ի դեպքերում: Աստիզմատիզմի միջին ցուցանիշը եղել է $(\pm)2,2 \pm (\pm)1,3$ D (սվազագույն՝ 0,5; առավելագույն՝ 5,75):

Դիտվել են աստիզմատիզմի հետևյալ ցուցանիշները ըստ կատեգորիաների՝ մինչև $(\pm)2$ ՝ 47,6% (60 աչք), $(\pm)2 - (\pm)4$ ՝ 41,3% (52 աչք) և $(\pm)4$ և ավելի՝ 11,1%-ի (14 աչք) դեպքում (նկ. 2):



Նկար 2. FEMTO LASIK տեխնոլոգիայով ռեֆրակցիոն միջամտության ենթարկված հիվանդների աստիզմատիզմի կատեգորիաները ըստ մասնաբաժինների:

Նախավիրահատական տեսողության սրությունը

FEMTO LASIK ռեֆրակցիոն միջամտություն անցած հիվանդների նախավիրահատական տեսողության սրության միջին ցուցանիշները կազմել են՝ $0,1 \pm 0,07$ (սվազագույնը՝ 0,01, առավելագույնը՝ 0,4) :

Նախավիրահատական առավելագույն կորեկցիայով տեսողության սրության ցուցանիշները կազմել են $0,8 \pm 0,2$ (սվազագույնը՝ 0,1, առավելագույնը՝ 1,0):

Լաթի հաստությունը միջինը կազմել է $99,5 \pm 10,6$ մկմ (սվազագույն՝ 90, առավելագույն՝ 120): Ներակնային ճնշումը ըստ Մակլակովի կազմել է միջինը՝ $19,2 \pm 1,3$ մմ ս.ս.: Եղջերաթաղանթի տրամագիծը միջինը կազմել է $12,1 \pm 1,8$ մմ:

Հետվիրահատական տեսողության սրությունը


Տեսողության սրության միջին ցուցանիշները վիրահատությունից 1 օր, 1 շաբաթ և 1 ամիս անց ներկայացված են աղյուսակ 3-ում՝ հետվիրահատական առաջին ամսում կազմելով 0,9 ցուցանիշ (աղ. 3, նկ. 3):

Աղյուսակ 3.

FEMTO LASIK տեխնոլոգիայով ռեֆրակցիոն միջամտության ենթարկված հիվանդների հետվիրահատական տեսողության սրության ցուցանիշներ

(N= 133)	
Հետվիրահատական 1-ին օր	$0,8 \pm 0,2$ (սվազագույն՝ 0,1, առավելագույն՝ 1,0)
Հետվիրահատական 1-ին շաբաթ	$0,8 \pm 0,2$ (սվազագույն՝ 0,1, առավելագույն՝ 1,0)
Հետվիրահատական 1-ին ամիս	$0,9 \pm 0,2$ (սվազագույն՝ 0,4, առավելագույն՝ 1,0)

Տեսողության սրության ցուցանիշներ



Նկար 3. FEMTO LASIK տեխնոլոգիայով ռեֆրակցիոն միջամտության ենթարկված հիվանդների նախա- և հետվիրահատական տեսողության սրության ցուցանիշ գրաֆիկական պատկերը:

Ամփոփում

Ժամանակակից ռեֆրակտիվ վիրաբուժության արագընթաց զարգացումն ու նորանոր տեխնոլոգիաների կիրառումը հնարավորություն է ընձեռում ստանալու ռեֆրակցիոն միջամտություն անցած հիվանդների տեսողության սրության ավելի լավ արդյունքներ և հետվիրահատական մնացորդային աստիգմատիզմի, ինչպես նաև բարդությունների առաջացման ցածր ցուցանիշներ: Նման տեխնոլոգիաների հասանելիությունը Ա.Վ. Մալայանի անվան ակնաբուժական կենտրոնի ռեֆրակցիոն վիրաբուժության բաժանմունքում ստեղծում կատարելու միջազգային ընդունված միջամտություններ՝ դրանց շարունակական բարելավմամբ: Ռեֆրակցիոն միջամտություն անցած հիվանդների նախա- և հետվիրահատական, դինամիկ հսկողության ցուցանիշների ուսումնասիրությունը, դրանց քանակական և որակական գնահատումն ապահովում է միջազգային ստանդարտներին

համապատասխան որակ և ցուցանիշներ: Ըստ սույն հետազոտության արդյունքների՝ ռեֆրակցիոն միջամտություն անցած հիվանդների տեսողության սրության միջին արժեքը կազմել է $\pm 5,6D$ ՝ մատնանշելով մեթոդի դերի կարևորությունը ռեֆրակցիայի բարձր աստիճանների շտկման դեպքում: FEMTO LASIK ռեֆրակցիոն միջամտություն անցած հիվանդների մոտ 60%-ը ունեցել է ռեֆրակցիայի «բարձր» աստիճան: Հիվանդներից 95%-ի դեպքում առկա է եղել նաև աստիգմատիզմ (\pm)2,2D միջին ցուցանիշով: Հետվիրահատական 1-ին ամսում տեսողության սրության միջին ցուցանիշը կազմել է $0,9 \pm 0,2$: Այսպիսով, գրանցված արդյունքները փաստում են և հաստատում ժամանակակից մասնագիտական գրականության տվյալները, ըստ որոնց՝ FEMTO LASIK ռեֆրակցիոն միջամտության դերը և արդյունքը անգնահատելի են բարձր ռեֆրակցիայի աստիճանի և աստիգմատիզմի համակցմամբ դեպքերի շտկման հարցում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Durrie D.S., Kezirian G.M. Femtosecond laser versus mechanical microkeratome flaps in wavefront-guided laser in situ keratomileusis: prospective contralateral study. *J. Cataract Refract. Surg.*, 2005;31(1):120-6
2. Knox Cartwright N.E., Tyrer J.R., Jaycock P.D., Marshall J. Effects of variation in depth and side cut angulations in LASIK and thin-flap LASIK using a femtosecond laser: a biomechanical study. *J. Refract. Surg.*, 2012;28(6):419-25
3. Kanellopoulos AJ, Asimellis G. Digital analysis of flap parameter accuracy and opaque bubble layer objective assessment in femtosecond laser assisted LASIK. A novel technique. *Clin Ophthalmol.* 2013;7:343-51.
4. Kanellopoulos AJ, Asimellis G. Long-term bladeless LASIK outcomes with the FS200 Femtosecond and EX500 Excimer Laser workstation: the Refractive Suite. *Clin. Ophthalmol.* 2013;7:261-9
5. Montes-Mico R., Rodríguez-Galietero A., Alio J.L., Cervino A. Contrast sensitivity after LASIK flap creation with a femtosecond laser and a mechanical microkeratome. *J. Refract. Surg.*, 2007;23(2):188-92
6. Morshirfar M., Gardiner J.P., Schliesser J.A., Espandar L., Feiz V., Mifflin M.D. et al. Laser in situ keratomileusis flap complications using mechanical microkeratome versus femtosecond laser: retrospective comparison. *J. Cataract Refract. Surg.*, 2010;36:1925-33
7. Muñoz G., Albarrán-Diego C., Ferrer-Blasco T., García-Lázaro S., Cerviño-Expósito A. Long-term comparison of corneal aberration changes after laser in situ keratomileusis: mechanical microkeratome versus femtosecond laser flap creation. *J. Cataract Refract. Surg.*, 2010;36(11):1934-44
8. Pajic B., Vastardis I., Pajic-Eggspuehler B., Gatziofias Z., Hafezi F. Femtosecond laser versus mechanical microkeratome-assisted flap creation for LASIK: a prospective, randomized, paired-eye study. *Clin. Ophthalmol.*, 2014;8:1883-9
9. Randleman J.B., Dawson D.G., Grossniklaus H.E., McCarey B.E., Edelhauser H.F. Depth-dependent cohesive tensile strength in human donor corneas: implications for refractive surgery. *J. Refract. Surg.*, 2008;24(1):S85-9
10. Rosa A.M., NetoMurta J., Quadrado MJ., Tavares C., Lobo C., Van Velze R. et al. Femtosecond laser versus mechanical microkeratomes for flap creation in laser in situ keratomileusis and effect of postoperative measurement interval on estimated femtosecond flap thickness. *J. Cataract Refract. Surg.*, 2009;35(5):833-8.
11. Salomão MQ, Ambrósio Jr R., Wilson SE. Dry eye associated with laser in situ keratomileusis: Mechanical microkeratome versus femtosecond laser. *J. Cataract Refract Surg.* 2009;35(10):1756-60.
12. Salomao M.Q., Wilson S.E. Femtosecond laser in laser in situ keratomileusis. *J. Cataract Refract Surg.* 2010; 36:1024-32.
13. Soong HK, Malta J.B. Femtosecond lasers in ophthalmology. *Am J. Ophthalmol.* 2009;147:189-97.
14. Stern D., Schoenlein R.W., Puliafito C.A., Dobi E.T., Birngruber R., Fujimoto J.G. Corneal ablation by nanosecond, picosecond, and femtosecond lasers at 532 and 625 nm. *Arch Ophthalmol.* 1989;107(4):587-92.
15. Tran D.B., Sarayaba M.A., Bor Z., Garufis C., Duh Y.J., Soltes C.R., et al. Randomized prospective clinical study comparing induced aberrations with IntraLase and Hansatome flap creation in fellow eyes: potential impact on wavefront-guided laser in-situ keratomileusis. *J. Cataract Refract Surg.* 2005;31(1):97-105.
16. Wilson S.E. Laser in situ keratomileusis-induced (presumed) neurotrophic epitheliopathy. *Ophthalmology.* 2001;108:1082-7.
17. Zhang Y., Chen Y.G., Xia Y.J. Comparison of corneal flap morphology using AS-OCT in LASIK with the WaveLight FS200 femtosecond laser versus a mechanical microkeratome. *J. Refract. Surg.* 2013; 29:320-4.
18. Zheng Y., Zhou Y., Zhang J., Liu Q., Zhai C., Wang Y. Comparison of laser in situ keratomileusis flaps created by 2 femtosecond lasers. *Cornea.* 2015;34(3):328-33.

РЕЗЮМЕ

ОЦЕНКА ЭФФЕКТИВНОСТИ РЕФРАКЦИОННОГО ВМЕШАТЕЛЬСТВА ФЕМТО-LASIK

Малаян Е. А.^{1,2} Манукян С. В.¹

¹Отделение диагностики и эксимер-лазерной хирургии, Офтальмологический центр имени С.В. Малаяна

²ЕГМУ, Кафедра офтальмологии

Ключевые слова: лазерная коррекция, Фемто-ЛАСИК, рефракционная хирургия.

Фемто-ЛАСИК - методика лазерной коррекции зрения, которая в настоящее время широко используется в современной рефракционной хирургии роговицы, имеет следующие преимущества: формирование роговичного лоскута без механического воздействия на роговицу, возможность изменения ножки и диаметра лоскута, большая точность и предсказуемость формирования лоскута, использование в случае утонченной роговицы, снижение частоты ЛАСИК-индуцированного синдрома сухого глаза, быстрое восстановление функции зрения, стабильность результатов, а также

возможность коррекции осложнений после использования микрокератома.

Текущее исследование оценивает эффективность Фемто-ЛАСИК - рефракционного вмешательства в отделении диагностики и эксимер-лазерной хирургии, офтальмологического центра имени С. В. Малаяна. Согласно результатам, у 60% пациентов, перенесших Фемто-ЛАСИК, степень нарушения рефракции была «Высокая»: средний показатель рефракции составлял (\pm) 5,6D. У большинства пациентов (95%) имел место астигматизм со средним показателем (\pm) 2,2D. Средний показатель остроты зрения в 1-ом месяце послеоперационного периода составил 0,9.

SUMMARY

THE EVALUATION OF EFFECTIVENESS OF THE FEMTO-LASIK REFRACTIVE INTERVENTION

Malayan E.A.^{1,2}, Manukyan S.V.¹

¹Diagnostic and Laser Surgery Department, Ophthalmological Center after S.V. Malayan

²YSMU, Department of Ophthalmology

Keywords: laser correction, FEMTO LASIK, refractive surgery.

Femtosecond LASIK method is widely used in contemporary corneal and refractive surgery having the following advantages: lamellar flap formation performed without mechanical microkeratome, flap base and diameter change options, greater accuracy and predictability of flap formation, possibility of usage in case of thinned cornea, decrease in the incidence of LASIK-induced dry eye, rapid recovery of visual function, higher quality of vision, stability of vision as well as the possibility of correction

of microkeratome-induced complications. The current study is aimed at evaluating the FEMTO LASIK refractive intervention effectiveness at the Diagnostic and Laser Surgery Department of the Ophthalmological Center after S.V. Malayan. According to the results, 60% of the patients undergoing FEMTOLASIK had "high" degree of refraction: the mean refraction index was (\pm) 5.6D. The majority of patients (95%) had also astigmatism, with mean index of (\pm) 2.2D. The average rate of visual acuity in post-operative 1st month was 0.9.

ԱԼԿՈՅՈՒԼԱՅԻՆ ՀԱՐԲԱԾՈՒԹՅԱՆ ՉՈՒԳԱԿՑՄԱՄԲ ԸՆԹԱՑՈՂ ՄԵԿՈՒՍԱՑՎԱԾ ԳԱՆԳՈՒՂԵՂԱՅԻՆ ՎՆԱՍՎԱԾՔԻ ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՄԵՆԵՋՄԵՆԹԻ ԱՌԱՆՁՆԱԶԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Միրպոյան Յ.Յ.
ԵՊԲՀ, Նյարդավիրաբուժության ամբիոն

Բանալի բառեր՝ *ալկոհոլ, հարբածություն, գանգոլեդային մեկուսացված վնասվածք, կլինիկական մենեջմենթ, առանձնահատկություններ:*

Ալկոհոլային հարբածությունը ոչ միայն նպաստում է մեկուսացված գանգոլեդային վնասվածքի (ՄԳՈՒԿ), այլև ՄԳՈՒԿ-ի կլինիկական մենեջմենթում բարդ ու խճճված խնդիրների առաջացմանը, արդյունավետ բժշկակազմակերպական մոտեցումների մշակմանն ու կիրառմանը: Պատահական չէ, որ մի շարք հետազոտություններում հիվանդների շուրջ 61,2%-ը վնասվածք ստանալու պատճառ է դիտարկվում հոգնածությունը, դրա հետևանքով դրսևորված անուշադրությունը [3], 54,3%-ը նշում է ալկոհոլ օգտագործելն աշխատանքային շաբաթվա կամ օրվա վերջում կուտակված հոգեհուզական լարվածությունը, զերհոգնածությունը թուլացնելու նպատակով, որը 2,3-3 անգամ մեծացնում է գանգոլեդային վնասվածքի հավանականությունը [1, 2, 9, 11]:

Մեկուսացված գանգոլեդային վնասվածքի ախտորոշման գործընթացի կազմակերպման հարցերը հատկապես բարդ են ալկոհոլային հարբածության վիճակում գտնվող հիվանդների շրջանում, քանի որ ՄԳՈՒԿ-ի կլինիկական դրսևորումն ու ընթացքը շեղվում են դասական ընթացքից, հիվանդության տարբեր փուլերում հաճախ արտահայտվում բարդ ու խճճված կլինիկական պատկերով [1, 9, 13]: Ալկոհոլային հարբածության վիճակում գտնվելը հիվանդների շրջանում առավել հաճախ կարող է թույլ տալ բացթողումներ ու տարաբնույթ սխալներ ախտորոշման և բուժման գործընթացը կազմակերպելու և իրականացնելու հարցում [7, 8, 9]: Այս ամենը խնդիր է առաջացնում ստացիոնար և հատկապես ամբուլատոր պայմաններում բժշկական օգնություն ցուցաբերելու և հսկողության նպատակով առավել օպտիմալ բժշկակազմակերպական մոտեցումներ մշակելու, որոնք հնարավորություն կտան խուսափելու ՄԳՈՒԿ-ի անցանկալի բարդություններից, ելքերից և հետևանքներից [6, 10, 12]: Ալկոհոլի չարաշահումն էական նշանակություն կարող է ունենալ ոչ միայն գանգոլեդային վնասվածքի վաղ փուլերում, այլև հետագայում անբարենպաստ հետևանքների

զարգացման, մասնավորապես քրոնիկական սուբդուրալ արյունակույտի զարգացման, որը կարող է հիվանդի կյանքի համար անմիջական վտանգ սպառնացող վիճակ ստեղծել: Վերջին տարիներին այն բավական հաճախացել է պայմանավորված ոչ միայն վնասակասար սովորույթներով, այդ թվում ալկոհոլի չարաշահմամբ՝ այլև ալկոհոլային հարբածության զուգակցմամբ դիտվող ՄԳՈՒԿ-ի կլինիկական մենեջմենթի մոտեցումների պակաս արդյունավետությամբ, ի տարբերություն այդ զուգակցման բացակայության դեպքում կիրառվող մոտեցումների [4, 5, 9]:

Աշխատանքի նպատակն է գնահատել ալկոհոլային հարբածության ազդեցությունը մեկուսացված գանգոլեդային վնասվածքի կլինիկական մենեջմենթի մոտեցումներում:

Հետազոտության նյութը և մեթոդները

Հետազոտության առաջնային նյութը ՀՀ տարբեր քաղաքներում մայրաքաղաք Երևանի և մարզկենտրոններ Գյումրիի, Վանաձորի, Կապանի, Հրազդանի, Աշտարակի բժշկական կենտրոններում (ԲԿ) մեկուսացված գանգոլեդային վնասվածքով (ՄԳՈՒԿ) հիվանդներին ցուցաբերված բժշկական օգնության կազմակերպմանն ու իրականացմանը վերաբերող տվյալներն են, որոնք գրանցված են համապատասխան փաստաթղթերում՝ հիվանդության նկարագրերում և ամբուլատոր դեպքերի գրանցամատյաններում: Երևանում հետազոտությունն իրականացվել է երեք նեղ մասնագիտացված հիվանդանոցներում՝ «Արմենիա», «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» և «Էրեբունի» ԲԿ-ներում, իսկ մարզկենտրոններում՝ համանուն ԲԿ-ներում: Հետազոտության մեջ ընդգրկվել են 3746 հիվանդներ ՄԳՈՒԿ-ով, որոնցից 2294-ը ստացել է ստացիոնար բժշկական օգնություն, իսկ 1452-ը չի հոսպիտալացվել՝ ստանալով ամբուլատոր բժշկական օգնություն:

ՄԳՈՒԿ-ով հիվանդներից 255-ը գտնվել է ալկոհոլային հարբածության վիճակում (աղ. 1), նրանցից 156-ը ստացել է ստացիոնար բուժօգնություն (աղ. 2):

2832 հիվանդների շրջանում ախտորոշվել

Ե գլխուղեղի ցնցում, 295-ի շրջանում՝ գլխուղեղի թեթև աստիճանի սալջարդ, 214-ի՝ գլխուղեղի միջին աստիճանի սալջարդ և 217-ի՝ գլխուղեղի ծանր աստիճանի սալջարդ: 151 հիվանդների շրջանում ախտորոշվել է գլխուղեղի ճնշման համախտանիշով դրսևորվող ներգանգային արյունակույտ, 37-ի շրջանում՝ գանգաթաղը կազմող ոսկրերի ներհրված կոտրվածք, որի հետևանքով զարգացել է գլխուղեղի ճնշման համախտանիշ (աղ. 1):

ՄԳՈՒԿ-ը կլինիկորեն դրսևորվել է գիտակցության խանգարման երևույթներով (822), մենինգեալ կամ օջախային ախտահարման նշաններով, ընդհանուր գանգուղեղային և ակնաշարժ նյարդերի խանգարման երևույթներով կամ դրանցից որևէ մեկի կամ մի քանիսի բացակայությամբ (աղ. 1):

ՄԳՈՒԿ-ն ախտորոշելու համար իրականացվել են նյարդաբանական զննում, գանգի ռենտգենաբանական և գլխուղեղի ՅՇ հետազոտություններ, ինչպես նաև պարակլինիկական հետազոտություններ՝ նյարդաօֆթալմոլոգիական հետազոտություն և էխոէնցեֆալոսկոպիա: Պայմանականորեն որպես ախտորոշման սխալ են դիտարկվել այն դեպքերը, երբ հիվանդի ընդունվելուց հետո առաջին 24 ժամերին հաստատված ախտորոշումը չի համընկել վերջնական ախտորոշմանը: Այդպիսի սխալներ են թույլ տրվել ստացիոնար բժշկական օգնություն ստացած 502 հիվանդների շրջանում, 1792 հիվանդների շրջանում ախտորոշման սխալներ չեն հայտնաբերվել (աղ. 2):

ՄԳՈՒԿ-ի ելքերը գնահատվել են Գլազգոյի ելքերի սանդղակով (ԳԵՍ, Glasgow Outcome Scale) և Կառնֆսկու ասնդղակով (ԿՍ): ՄԳՈՒԿ-ով հիվանդներն ըստ ելքի առանձնացվել են 3 խմբերում: Առաջին խմբում ընդգրկվել են այն հիվանդները (թվով 1456 հիվանդներ), որոնց դեպքում ՄԳՈՒԿ-ի ելքը ԳԵՍ-ով եղել է 5 բալ, իսկ ԿՍ-ով 90-100 բալ, 2-րդ խմբում (784 հիվանդներ)՝ ԳԵՍ-ով՝ 2-4 բալ, իսկ ԿՍ-ով՝ 10-80 բալ, 3-րդ խմբում՝ մահվան ելքով հիվանդները (54)՝ ԳԵՍ-ով՝ 1 բալ, իսկ ԿՍ-ով՝ 0 բալ: Առաջին խմբի հիվանդների շրջանում ԳՈՒԿ-ի ելքը պայմանականորեն եղել է լավ, 2-րդ խմբի հիվանդների շրջանում՝ բավարար, 3-րդ խմբի հիվանդների շրջանում՝ մահ (աղ. 3):

66 հիվանդների շրջանում զարգացել են արտազանգային, ներգանգային բարդություններ կամ երկու տեսակ բարդություն նույն հիվանդի դեպքում (Աղ. 3): Արտազանգային բարդություններից են պառկելախոցի, թոքաբորբի, սրտամկանի սուր ինֆարկտի զարգացումը, որոնք դիտվել են 9 հիվանդի շրջանում ներգանգային բարդություններից՝ գլխուղեղի այտուցի, գլխուղեղի ճնշման, դիսլոկացիոն

երևույթների զարգացում, Էնցեֆալոմալացիայի օջախների ձևավորում, մենինգոէնցեֆալիտի, իշեմիկ ինսուլտի զարգացում, որոնք նշվել են 41 դեպքի, 2 տեսակ բարդություններ զարգացել են 16 հիվանդի շրջանում:

Չավաքագրված տվյալներն ու բոլոր չափանիշների արժեքները ծածկագրվել և մուտքագրվել են մեր կողմից մշակված համակարգչային տվյալների բազայում: Բազայում մուտքագրված տվյալները մշակվել են վիճակագրական SPSS 22.0 (Statistical Package for the Social Sciences - SPSS Inc, an IBM company, Chicago, Illinois, USA) ծրագրային փաթեթի միջոցով, որը հնարավորություն է տվել կիրառելու χ^2 թեստը: Նշված տվյալների վերլուծության հիման վրա ստեղծվել են աղյուսակներ: Չետազոտությունների արդյունքները վիճակագրորեն հավաստի են առաջին տեսակ սխալի հավանականության $p < 0,05$ դեպքում:

Արդյունքները և քննարկումը

Ալկոհոլային հարբածության վիճակը՝ ազդելով ՄԳՈՒԿ-ի կլինիկական ընթացքի վրա, կարող է հանգեցնել տարբեր աստիճանների արտահայտված գիտակցության խանգարման, անբարենպաստ դրսևորումների՝ գրգռվածության, անհնազանդության, ցինիզմի, ագրեսիայի երևույթների և այլն:

Ստացված արդյունքներից պարզվել է (աղ. 1), որ գիտակցության խանգարման դեպքերը ալկոհոլային հարբածության վիճակում գլխուղեղի ցնցում ստացած հիվանդների (189) խմբում 27,5% (52) են, իսկ ալկոհոլ չօգտագործած հիվանդների (2643) խմբում 9,7% (256), ($\chi^2 = 57,83$, $p < 0,0001$):

Ներկայացված տվյալներից երևում է, որ գիտակցության խանգարման դեպքերը ալկոհոլային հարբածության վիճակում ՄԳՈՒԿ-ի մյուս տեսակներով (66) հիվանդների խմբում 86,4% (57) են, իսկ ալկոհոլ չօգտագործած հիվանդների (848) խմբում 53,9% (457), ($\chi^2 = 26,23$, $p < 0,0001$): Այսպիսով, ալկոհոլային հարբածության զուգակցմամբ ընթացող ՄԳՈՒԿ-ն զգալիորեն հաճախ է դրսևորվում գիտակցության խանգարմամբ:

Չետազոտության արդյունքները վկայում են (աղ. 2), որ ախտորոշման սխալները ալկոհոլային հարբածության վիճակում գլխուղեղի ցնցումով հիվանդների (93) խմբում 25,8% (24) է, իսկ ալկոհոլ չօգտագործածների խմբում (1374)՝ 17,5% (241), ($\chi^2 = 4,02$, $p = 0,045$): Ալկոհոլային հարբածության վիճակում ՄԳՈՒԿ-ի մյուս տարատեսակներով հիվանդների (63) խմբում ախտորոշման սխալները եղել են 41,3% դեպքերում (26), իսկ ալկոհոլ չօգտագործած

Աղյուսակ 1.

ՄԳՈՒՎ-ով հիվանդների շրջանում գիտակցության խանգարման դրսևորումների կախվածությունը ակտիվային հարբածությունից

ՄԳՈՒՎ, գիտակցությունը	Ակտիվային հարբածություն				Ընդամենը			
	չկա		կա		n		%	
	n	%	n	%				
Գլխուղեղի ցնցում								
պարզ	2387	90,3	137	72,5	2524	89,1		
խանգարված	256*	9,7	52*	27,5	308	10,9		
ընդամենը	2643	93,3	189	6,7	2832	75,6		
ՄԳՈՒՎ-ի մյուս տեսակները								
պարզ	391	46,1	9	13,6	400	43,8		
խանգարված	457#	53,9	57#	86,4	514	56,2		
ընդամենը	848	92,8	66	7,2	914	24,4		
Ընդամենը	3491	93,2	255	6,8	3746	100,0		

Ծանոթություն. * $\chi^2=57,83, p<0,0001$; # $\chi^2 =26,23, p<0,0001$:

Աղյուսակ 2.

Ախտորոշման սխալների կախվածությունն ակտիվային հարբածությունից

ՄԳՈՒՎ, ախտորոշման սխալ	Ակտիվային հարբածություն				Ընդամենը			
	բացակայություն		առկայություն		n		%	
	n	%	n	%				
Գլխուղեղի ցնցում								
չկա	1133	82,5	69	74,2	1202	81,9		
կա	241*	17,5	24*	25,8	265	18,1		
ընդամենը	1374	93,7	93	6,3	1467	64,0		
ՄԳՈՒՎ-ի մյուս տեսակները								
չկա	553	72,4	37	58,7	590	71,3		
կա	211#	27,6	26#	41,3	237	28,7		
ընդամենը	764	92,4	63	7,6	827	36,0		
Ընդամենը	2138	93,2	156	6,8	2294	100,0		

Ծանոթություն. * $\chi^2=4,02, p=0,045$; # $\chi^2=5,30, p=0,02$:

հիվանդների (764) խմբում 27,6% (211) դեպքերում ($\chi^2=5,30, p=0,02$): Այսպիսով, կարող ենք փաստել, որ ակտիվային հարբածության վիճակն անբարենպաստ է ՄԳՈՒՎ-ով հիվանդների շրջանում ախտորոշման սխալների քանակի հավաստի ավելացման պատճառով:

Վերոնշյալից ելնելով, կարող ենք փաստել, որ ՄԳՈՒՎ-ը աչքի է ընկնում կլինիկաձևաբանական դրսևորման և ընթացքի առանձնահատկություններով, մասնավորապես նյարդաբանական դրսևորման և կլինիկական ընթացքի յուրահատկություններով, որոնցում մեծ դեր ունի ակտիվային հարբածությունը: Այս ամենը լրջագույն խնդիրներ է առաջացնում ՄԳՈՒՎ-ի ախտորոշման գործընթացը կազմակերպելու հարցում, հանգեցնում տարատեսակ բազմաթիվ թերացումների ու սխալների: Եթե սրան հավելենք, որ ակտիվային հարբածության

վիճակում ՄԳՈՒՎ-ով հիվանդների միայն 61,2% (156/255)-ն են ստանում ստացիոնար բուժօգնություն, ապա առավել արտահայտիչ է դառնում խնդրի կարևորությունը: Առկա խնդիրների լուծման ուղղությամբ անհրաժեշտ է սահմանել ՄԳՈՒՎ-ի կլինիկական դրսևորման և կլինիկական ընթացքի, ինչպես նաև ներզանգային ախտաձևաբանական վնասվածքային փոփոխությունների դիանամիկ հսկողություն՝ կատարելով նյարդաբանական զննում, նեյրոտեսանելի հետազոտություններ և պարակլինիկական հետազոտություններ:

Ուսումնասիրվել է ակտիվային հարբածության ազդեցությունը ՄԳՈՒՎ-ի բուժական գործընթացի, ելքերի, ներզանգային և արտազանգային բարդությունների, ստացիոնար բուժման միջին տևողության վրա (աղ. 3): Այսպես, հայտնաբերվել է, որ ակտիվային հարբածության վիճակում ՄԳՈՒՎ ստացած

Աղյուսակ 3.

Ալկոհոլային հարբածության ֆոնի վրա ընթացող ՄԳՈՒՎ-ի ելքը, բարդությունները

Ուսումնասիրվող ցուցանիշներ	Ալկոհոլային հարբածություն				Ընդամենը	
	չկա		կա		n	%
	n	%	n	%		
ՄԳՈՒՎ-ի ելքը						
լավ	1367*	63,9	89*	57,1	1456	63,5
բավարար	725	33,9	59	37,8	784	34,2
բացասական	46*	2,2	8*	5,1	54	2,3
Բարդությունները						
Ներզանգային	37	1,7	4	2,6	41	1,8
արտազանգային	7	0,3	2	1,3	9	0,4
2-ը միասին	14	0,7	2	1,3	16	0,7
բացակայում են	2080	97,3	148	94,9	2228	97,1
Ընդամենը	2138	93,2	156	6,8	2294	100,0

Ծանոթություն. $\chi^2=7,21, p=0,027$:

հիվանդների (156) շրջանում բացասական ելքը նշվել է ավելի հաճախ (5,1% (86)), լավ ելքը՝ սակավ (57,1% (89)), քան սթափ վիճակում ընդունված հիվանդների խմբում (2138), որում բացասական ելքը 2,2% (46) է, լավ ելքը՝ 63,9% (1367): Ալկոհոլային հարբածության վիճակում ՄԳՈՒՎ-ով հիվանդների խմբում ավելի հաճախ են դիտվել բարդություններ, ինչպես ներզանգային (2,6% (4)), այնպես էլ արտազանգային (1,3% (2)) կամ երկու բարդությունները միաժամանակ (1,3% (2)), քան ալկոհոլային հարբածության վիճակում չեղող հիվանդների դեպքում (ներզանգային բարդությունները՝ 1,7% (37), արտազանգային՝ 0,3% (7), երկու բարդությունները միաժամանակ՝ 0,7% (14)): Հետևապես, ալկոհոլի չարաշահումը բացասաբար է անդրադառնում ՄԳՈՒՎ-ով հիվանդներին ցուցաբերվող բժշկական օգնության կազմակերպմանը և

իրականացմանը, ՄԳՈՒՎ-ի ելքերին:

Այսպիսով՝ ՄԳՈՒՎ-ի ախտորոշման և բուժման գործընթացի կազմակերպման ռիսկ է համդիսանում ալկոհոլային հարբածությունը, որն էական ազդեցություն ունի ինչպես ՄԳՈՒՎ-ի կլինիկական դրսևորման, այնպես էլ անբարենպաստ ելքերի և բարդությունների զարգացման վրա: Նշված ռիսկը նվազեցնելու համար անհրաժեշտ է ՄԳՈՒՎ-ի բուժական գործընթացի կազմակերպելիս, հաշվի առնել հայտնաբերված առանձնահատկությունները, որոնք դիտվում են ալկոհոլային հարբածության զուգացման դեպքում:

Եզրակացություն: Ալկոհոլային հարբածությունն էական ազդեցություն ունի ՄԳՈՒՎ-ի կլինիկական դրսևորման, ընթացքի և ելքերի վրա, որոնցով էլ մեծապես պայմանավորված են կլինիկական մենեջմենթի առանձնահատկությունները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Гришин С.Г., Берснев В.П., Валерко В.Г., Драгун В.М., Морозов С.А., Морозов А.И., Микаилов С.Ю. Влияние этанола на течение изолированной тяжелой ЧМТ // Российский нейрохирургический журнал им. Поленова / СПб., 2013, том V, с. 21.
2. Егоров А. Ю., Алкоголизм в позднем возрасте: гендерный аспект // Журнал неврологии и психиатрии им. С.С. Корсакова / М., 2006, №9 (106), с. 17-21.
3. Мордовцев А.Г. Медико-социальные риски черепно-мозгового травматизма и их профилактика (по материалам социологического исследования) // Автореф. дисс. ... канд. мед. наук / Астрахань, 2007, 23 с..
4. Полховский А.А. Ранняя диагностика, особенности течения и лечения хронических субдуральных гематом у больных пожилого и старческого возраста // Автореф. дисс. ... канд. мед. наук / М., 2007, 27с..
5. Сергеев В.А. Сравнительное клинико-психологическое исследование больных с отдаленными последствиями черепно-мозговой травмы, осложненными алкогольной зависимостью // Автореф. дисс. ... докт. мед. наук / Челябинск, 2006, 17 с..
6. Филатова Ф.А., Гербер Ю.М., Филатова М.М. Некоторые показатели частоты и тяжести черепно-мозговой травмы в Удмуртской Республике // Мат. Всеросс. науч.-практ. конференции "Поленовские чтения" / СПб., 2005, с. 26-27.
7. Шеховцова К.В., Шеховцов В.И., Кондаков Е.Н. Эпидемиология черепно-мозговой травмы и организация медицинской помощи пострадавшим в Ставропольском крае // Нейрохирургия / М., 2006, № 3, с. 59-63.
8. Bernier R. A., Hillary F.G., Trends in alcohol use during moderate and severe traumatic brain injury: 18 years of neurotrauma in Pennsylvania, Brain Inj. 2016;30(4):414-421.
9. Chen C.M., Yi H.Y., Yoon Y.H., Dong C. Alcohol Use at Time of Injury and Survival Following Traumatic Brain Injury: Results From the National Trauma Data Bank, J Stud Alcohol Drugs, 2012 July, 73(4): 531-541.
10. Cheng Po-Liang, Lin Hsin-Yi, Lee Yi-Kung, Hsu Chen-Yang, Lee Ching-Chih, Su Yung-Cheng, Higher mortality rates among the elderly with mild traumatic brain injury: a nationwide cohort study, Scand J Trauma Resusc Emerg Med, 2014, 22:7.
11. Opreanu R.C., Kuhn D., Basson M.D., The Influence of Alcohol on Mortality in Traumatic Brain Injury, J Am Coll Surg. 2010 Jun; 210(6): 997-1007.
12. Pandor A., Goodacre S., Harnan S., Holmes M., Pickering A., Fitzgerald P., Rees

A., Stevenson M. Diagnostic management strategies for adults and children with minor head injury: a systematic review and an economic evaluation. *Health Technol Assess*, 2011, 15(27):1-202.

13. Raj R., Mikkonen E.D., Siironen J., Hernesniemi J., Lappalainen J., Skrifvars M.B. Alcohol and mortality after moderate to severe traumatic brain injury: a meta-analysis of observational studies. *J Neurosurg*. 2015 Oct, 23:1-9.

РЕЗЮМЕ

ОСОБЕННОСТИ КЛИНИЧЕСКОГО МЕНЕДЖМЕНТА ИЗОЛИРОВАННЫХ ЧЕРЕПНО-МОЗГОВЫХ ТРАВМ, ПРОТЕКАЮЩИХ НА ФОНЕ АЛКОГОЛЬНОГО ОПЬЯНЕНИЯ

Мирзоян А.О.

ЕГМУ, кафедра нейрохирургии

Ключевые слова: алкоголь, опьянение, изолированная черепно-мозговая травма, клинический менеджмент, особенности.

Одной из сложных задач клинического менеджмента изолированных черепно-мозговых травм (ИЧМТ), остается разработка и проведение медико-организационных подходов при больных с ИЧМТ, которые находятся в алкогольном опьянении, потому что в этих ситуациях клиническое проявление и течение ИЧМТ резко отклоняется от своего классического характера и на разных стадиях заболевания проявляется с сложной и запутанной клинической картиной.

В работе была поставлена цель оценить влияние алкогольного опьянения на подходы клинического менеджмента изолированных черепно-мозговых травм.

Первичным материалом исследования послужили данные, касающиеся организации и оказания медицинской помощи в медицинских центрах (МЦ) города Еревана и областных

центров - Гюмри, Ванадзор, Капан, Раздан, Аштарак, зарегистрированные в историях болезней и амбулаторных регистрационных журналах. В городе Ереване исследования проводились в трех узкоспециализированных МЦ - "Армения", "Эребуни", "Святой Григорий Просветитель", а в областных центрах - одноименных МЦ. В исследование были включены 3746 больных с ИЧМТ, из них 2294 получили стационарное лечение, 1452 - амбулаторное. В алкогольном опьянении были 255 больные, из них 156 больные получили стационарное лечение, 99 - амбулаторное. Статистический анализ первичного материала исследования осуществлена с применением компьютерной программы SPSS 22.0 (статистический пакет для социальных наук).

Заключение. Алкогольное опьянение имеет существенное влияние на клиническое проявление, течение и исходов изолированных черепно-мозговых травм, чем обусловлены особенности клинического менеджмента.

SUMMARY

PECULIARITIES OF CLINICAL MANAGEMENT OF ISOLATED TRAUMATIC BRAIN INJURY FLOWING THE ALCOHOLIC INTOXICATION

Mirzoyan H.H.

YSMU, Department of Neurological Surgery

Keywords: alcohol, intoxication, isolated brain trauma, clinical management, peculiarities.

One of the challenging tasks of clinical management of isolated traumatic brain injury (ITBI), remain the development and implementation of medico-organizational approaches in patients with ITBI, who are in alcoholic intoxication, because in these situations the clinical manifestation and course of ITBI sharply deviates from its classical nature, at different stages of the disease manifests with a complex and confusing clinical implications.

The goal was to evaluate the effect of alcoholic intoxication on approaches to clinical management of isolated traumatic brain injury.

The primary material of the study is based on data relating to the organization and delivery of health care in medical centres

(MC) of the city of Yerevan and the regional centers of Gyumri, Vanadzor, Kapan, Hrazdan, Ashtarak, registered in histories and ambulator logs. In the city of Yerevan the study was conducted in three specialized MC "Armenia", "Erebuni", "St. Gregory the Illuminator", a regional centers - the homonymous MC. The study included 3746 patients with ITBI, of whom 2294 were received inpatient treatment, 1452 - outpatient. In alcoholic intoxication was 255 patients, of whom 156 patients received inpatient treatment, 99 - outpatient. Statistical analysis the primary research material was carried out using the computer program SPSS 22.0 (statistical package for social Sciences).

Conclusion. Alcohol intoxication has a significant impact on the clinical manifestation, course and outcomes of isolated traumatic brain injury, what causes clinical features management.

ՀՏԴ 614.2

ԳԼԽՈՒՂԵՂԻ ՃՆՇՈՒՄ ԱՌԱՋԱՑՆՈՂ ՎՆԱՍՎԱԾՔԱՅԻՆ ԲՆՈՒՅԹԻ ՍՈՒՐ ՆԵՐԳԱՆԳԱՅԻՆ ԱՐՅՈՒՆԱԿՈՒՅՏԻ ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՄԵՆԵՋՄԵՆԹԻ ԱՌԱՆՁՆԱԳՆԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Միրզոյան Յ.Յ.¹, Հայրապետյան Ա.Կ.², Եղունյան Մ.Ա.¹, Պատրիկյան Դ.Ա.¹
¹ԵՊԲՀ, Նյարդավիրաբուժության ամբիոն
²ԵՊԲՀ, հանրային առողջության ամբիոն

Բանալի բառեր՝ գլխուղեղ, վնասվածքային ներգանգային սուր ճնշում, արյունակույտ, կլինիկական մենեջմենթ, առանձնահատկություններ:

Գլխուղեղի ճնշում առաջացնող վնասվածքային ներգանգային սուր արյունակույտի ախտորոշման հարցում առկա մոտեցումներն էապես տարբերվում են, որի մասին վկայում է նրա տեսակարար կշռի բավական լայն տիրույթը գանգուղեղային վնասվածքի (ԳՈՒԿ) ընդհանուր պատկերում՝ ծանր աստիճանի ԳՈՒԿ-ով հիվանդների շրջանում տատանվելով 25,0-45,0%-ի սահմաններում, միջին աստիճանի ԳՈՒԿ-ով հիվանդների շրջանում՝ 3,0-12,0%-ի սահմաններում [3, 8, 12, 13]: Նյարդավիրաբուժական բաժանմունք կամ ծառայություն ունեցող բուժփմնարկների մի մասում ներգանգային արյունակույտ ախտորոշվում է միայն այն հիվանդների դեպքում, երբ կատարված ՅՇ հետազոտությամբ հայտնաբերվում է ավելի քան 50մլ ներգանգային արյունակույտ, բոլոր մնացած դեպքերում, երբ արյունակույտն ունենում է փոքր չափեր (օրինակ՝ թիթեղանման սուբդուրալ, էպիդուրալ կամ թաղանթային արյունակույտ կամ ներուղեղային արյունակույտ 30-50մլ ծավալի) և չի առաջացնում գլխուղեղի ճնշման համախտանիշ, հիվանդների շրջանում ախտորոշվում է միայն գլխուղեղի սալջարդ: Այլ բուժփմնարկներում ներգանգային արյունակույտն ախտորոշվում է ՅՇ հետազոտությամբ ցանկացած ծավալի ու տեղակայման ներգանգային արյունակույտ հայտնաբերելու դեպքում: Երբեմն ԳՈՒԿ-ի սուր շրջանում գլխուղեղի ՅՇ հետազոտություն չի իրականացվում, որը դժվարացնում է ներգանգային արյունակույտի ախտորոշումը [5, 6, 7, 10]: Չնայած ներգանգային արյունակույտով հիվանդների բուժման բազմաթիվ չափորոշիչներին՝ դրանցում առկա են բազում վիճելի և հակասական հարցեր: Վերջին տարիներին տարվում են աշխատանքներ՝ առավել տարբերակիչ մոտեցումներ մշակելու ուղղությամբ, որոնցում հաշվի են առնվում գլխուղեղի սալջարդի օջախի, ներգանգային արյունակույտի ծավալը, տեղակայումը, ռեզերվային ներգանգային տարածությունների առկայությունը,

դիսլոկացիոն ախտանիշների, կլինիկական նշանների արտահայտվածության աստիճանը: Տարբեր հեղինակների ուսումնասիրություններից պարզվել է, որ ժամանակի ընթացքում որոշակի ծավալի ներգանգային վնասվածքային արյունակույտերը և գլխուղեղի սալջարդի օջախները լրիվ ներծծվում են կոնսերվատիվ բուժման արդյունքում, որը հաստատվում է ստուգողական ՅՇ հետազոտության իրականացմամբ [2, 11, 14, 15]: Վնասվածքային բնույթի սուր ներգանգային արյունակույտի հեռացման վիրահատական եղանակների ընտրության և ժամկետների հարցը ևս խնդրահարույց է [1, 4, 9, 11]:

Աշխատանքի նպատակն է գնահատել գլխուղեղի ճնշում առաջացնող վնասվածքային բնույթի սուր ներգանգային արյունակույտի կլինիկական մենեջմենթի մոտեցումների ազդեցությունը ելքերի վրա:

Հետազոտության նյութը և մեթոդները

Հետազոտության առաջնային նյութը Երևան քաղաքի 3 նեղ մասնագիտացված բժշկական կենտրոններում (ԲԿ)՝ «Արմենիա», «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» և «Էրեբունի», Գյումրիի, Վանաձորի, Կապանի ԲԿ-ում գլխուղեղի ճնշում առաջացնող վնասվածքային բնույթի սուր ներգանգային արյունակույտի կապակցությամբ վիրահատական բուժում ստացած 151 հիվանդների բժշկական օգնության կազմակերպմանն ու իրականացմանը վերաբերող տվյալներն են, որոնք գրանցված են համապատասխան փաստաթղթերում՝ հիվանդության նկարագրերում և վիրահատական գրանցամատյաններում:

Գլխուղեղի ճնշում առաջացնող վնասվածքային բնույթի սուր ներգանգային արյունակույտի նյարդաբանական դրսևորման առավել ծանր տեսակներն ընդգծելու համար, հիմք ընդունելով Լիխտերման-Կոնովալովի գիտակցության խանգարման և Գլազգոյի կոմայի սանդղակները (Glasgow Coma Scale, ԳԿՍ), մեր կողմից մշակվել և առաջարկվել է գիտակցության խանգարման գնահատման աշխատանքային սանդղակ (ԳԽԳԱՍ),

որում առանձնացվել են գիտակցության խանգարման սահմանային և ոչ սահմանային վիճակները (աղ. 1): Գիտակցության խանգարման ոչ սահմանային վիճակ է դիտվել պարզ գիտակցությամբ (կամ 15 բալ ըստ ԳԿՍ-ի), ինչպես նաև չափավոր և խոր մթազնման (կամ 11-14 բալ ըստ ԳԿՍ-ի) մակարդակներում գիտակցության խանգարմամբ դրսևորվող ներգանգային արյունակույտը (86): Գիտակցության խանգարման սահմանային վիճակ է դիտվել սոպորի (կամ 9-10 բալ ըստ ԳԿՍ-ի) և կոմայի (կամ 3-8 բալ ըստ ԳԿՍ-ի) մակարդակներում գիտակցության խանգարմամբ դրսևորվող ներգանգային արյունակույտը (65):

Ներգանգային բարդություններ են դիտվել 31 հիվանդի դեպքում՝ գլխուղեղի այտուցի, գլխուղեղի ճնշման, դիսլոկացիոն երևույթների զարգացում, էնցեֆալոմալացիայի օջախների ձևավորում, մենինգոէնցեֆալիտի, իշեմիկ ինսուլտի զարգացմամբ (աղ. 1):

Գլխուղեղի ճնշում առաջացնող վնասվածքային բնույթի սուր ներգանգային արյունակույտն ախտորոշելու համար իրականացվել են նյարդաբանական զննում, գանգի ռենտգենաբանական և գլխուղեղի ՅՇ հետազոտություններ, ինչպես նաև պարակլինիկական հետազոտություններ՝ նյարդաօֆթալմոլոգիական հետազոտություն և էխոէնցեֆալոսկոպիա: Մեր կողմից պայմանականորեն որպես ախտորոշման սխալ են դիտվել այն դեպքերը, երբ հիվանդի ընդունվելուց հետո առաջին 24 ժամերին հաստատված ախտորոշումը չի համընկել վերջնական ախտորոշմանը (42 հիվանդներ):

Գլխուղեղի ՅՇ հետազոտություն իրականացվել է 148 հիվանդների շրջանում (աղ. 2), հիվանդներին ԲԿ-ներ հոսպիտալացնելուց հետո առաջին 24 ժամերին կամ դրանից հետո եղած ժամանակահատվածում: Գլխուղեղի ՅՇ հետազոտությամբ նկարագրվել է ձևավորված ներգանգային արյունակույտ 142 հիվանդների դեպքում, մնացած հիվանդների դեպքում ներգանգային վնասվածքային փոփոխությունները որակվել են որպես սուբարախնոիդալ կամ ներուղեղային արյունազեղում կամ գլխուղեղի սալջարդի օջախ, իսկ վիրահատության ժամանակ արդեն հայտնաբերվել է ներգանգային արյունակույտը: Գլխուղեղի ՅՇ դինամիկ հսկողություն իրականացվել է 14 հիվանդների շրջանում, որոնց դեպքում հայտնաբերվել է ներգանգային հեմատոմայի ձևավորում կամ մեծացում, որը հանգեցրել է գլխուղեղի սուր ճնշման:

Ինտենսիվ թերապիայի և ստացիոնար բուժման

տևողությունը եղել է 1-153 օր:

Վիրահատություններն իրականացվել են տարբեր ժամկետներում (աղ.4), ըստ որի՝ պայմանականորեն առանձնացվել են հիվանդների 3 խմբեր, որոնք վիրահատվել են ընդունվելուց հետո մինչև 3 ժամ՝ 81 հիվանդ, 3-5 ժամվա ընթացքում՝ 18 հիվանդ, 5 ժամից հետո՝ 52 հիվանդ:

Նեղ մասնագիտացված ԲԿ-ներում վնասվածքային բնույթի ներգանգային արյունակույտը 102 դեպքերում հեռացվել է ռեզեկցիոն կրանիէկտոմիայի միջոցով, 22 դեպքում՝ ոսկրապլաստիկ կրանիտոմիայի և 7 դեպքում՝ լայնացված ֆրեզային անցքի միջոցով (աղ.5):

Գլխուղեղի ճնշում առաջացնող վնասվածքային բնույթի սուր ներգանգային արյունակույտի ելքերը գնահատվել են Գլագոյի ելքերի սանդղակով (ԳԵՍ, Glasgow Outcome Scale) և Կառնոֆսկու սանդղակով (ԿՍ): Ըստ այդմ հիվանդները բաժանվել են 3 խմբի: Առաջին խմբում ընդգրկվել են այն հիվանդները (78 հիվանդ), որոնց դեպքում արյունակույտի ելքը ԳԵՍ-ով եղել է 5 բալ, իսկ ԿՍ-ով՝ 90-100 բալ, 2-րդ խմբում (48 հիվանդ)՝ ԳԵՍ-ով՝ 2-4 բալ, իսկ ԿՍ-ով՝ 10-80 բալ, 3-րդ խմբում՝ մահվան ելքով հիվանդները (25)՝ ԳԵՍ-ով՝ 1 բալ, իսկ ԿՍ-ով՝ 0 բալ: Առաջին խմբի հիվանդների շրջանում արյունակույտի ելքը պայմանականորեն եղել է լավ, 2-րդ խմբի հիվանդների շրջանում՝ բավարար, 3-րդ խմբի հիվանդների շրջանում՝ մահ (աղ. 3):

Հավաքագրված տվյալներն ու բոլոր չափանիշների արժեքները ծածկագրվել և մուտքագրվել են մեր կողմից մշակված համակարգչային տվյալների բազայում: Բազայում մուտքագրված տվյալները մշակվել են վիճակագրական SPSS 22.0 (Statistical Package for the Social Sciences - SPSS Inc, an IBM company, Chicago, Illinois, USA) ծրագրային փաթեթի միջոցով, որը հնարավորություն է տվել կիրառելու χ^2 թեստը: Նշված տվյալների վերլուծության հիման վրա ստեղծվել են աղյուսակներ: Հետազոտությունների արդյունքները վիճակագրորեն հավաստի են առաջին տեսակի սխալի հավանականության $p < 0,05$ դեպքում:

Արդյունքները և քննարկումը

Վերլուծության արդյունքներից պարզվել է, որ գլխուղեղի ճնշում առաջացնող վնասվածքային բնույթի սուր ներգանգային արյունակույտը միայն 43,0% (65) դեպքերում է կլինիկորեն դրսևորվում գիտակցության խանգարման սահմանային վիճակով, իսկ 57,0% (86)-ում՝ ոչ սահմանային վիճակով: Կլինիկական դրսևորման այսպիսի առանձնահատկությունները մեծ մասամբ հանգեցնում են ախտորոշման սխալների (17,2% (26)) և ներգանգային բարդությունների

Աղյուսակ 1

Վնասվածքային սուր ներզանգային արյունակույտի ախտորոշման սխալների, ներզանգային բարդությունների կախվածությունը գիտակցական խանգարումից

Ախտորոշում	Ներզանգային բարդություններ										Ընդամենը	
	բացակայություն					զարգացում						
	Ախտորոշման սխալ										n	%
	չկա		կա		ընդ.	չկա		կա		ընդ.		
n	%	n	%	n	n	%	n	%	n	n	%	
Ներզանգային արյունակույտ												
ոչ սահմանային	51	67,1	25	32,9	76	5	50,0	5*	50,0	10	86	57,0
սահմանային	35	79,5	9	20,5	44	18	85,7	3*	14,3	21	65	43,0
Ընդամենը	86	71,7	34	28,3	120	23	74,2	8	25,8	31	151	100,0

Ծանոթություն. * $\chi^2=4,51, p=0,03$:

Աղյուսակ 2.

Վնասվածքային սուր ներզանգային արյունակույտի ախտորոշման սխալները ՅՇ արդյունքներից

ՅՇ հետազոտությամբ ներզանգային արյունակույտ	Ախտորոշման սխալ				Ընդամենը	
	չկա		կա			
	n	%	n	%	n	%
չի հայտնաբերվել	0*	0,0	6*	100,0	6	4,1
հայտնաբերվել է	109*	76,8	33*	23,2	142	95,9
Ընդամենը	109	73,6	39	26,4	148	100,0

Ծանոթություն. * $\chi^2 = 16,73, p<0,0001$:

զարգացման (20,5% (31)): Հատկապես գլխուղեղի ճնշում առաջացնող վնասվածքային բնույթի սուր ներզանգային արյունակույտի այնպիսի կլինիկական դրսևորման դեպքում, երբ հիվանդները գիտակցության խանգարման «ոչ սահմանային» վիճակում են (աղ. 1):

Այսպես՝ աղյուսակ 1-ում ներկայացված տվյալների վերլուծության արդյունքներից ակնհայտ է, որ ներզանգային բարդություններով ներզանգային արյունակույտի ախտորոշման սխալները գիտակցության խանգարման ոչ սահմանային վիճակով (10) դրսևորման դեպքում եղել են հավաստիորեն ($\chi^2=4,51, p=0,03$) ավելի հաճախ (50,0% (5)), քան գիտակցության խանգարման սահմանային վիճակով (21) դրսևորման դեպքում (14,3% (3)): Ուստի, կարելի է ենթադրել, որ գիտացության խանգարման սահմանային վիճակով դրսևորվող ներզանգային արյունակույտի ախտորոշման սխալները հանգեցնում են ներզանգային բարդությունների զարգացման:

Գլխուղեղի ճնշում առաջացնող վնասվածքային բնույթի սուր ներզանգային արյունակույտի ախտորոշման սխալների նվազմանը մեծապես նպաստում է գլխուղեղի ՅՇ հետազոտությունը, այնուհանդերձ վերլուծության արդյունքներից պարզվել է, որ նույնիսկ այդ հետազոտությունն իրականացնելու դեպքում հնարավոր են ախտորոշման սխալներ:

Այսպես՝ ներզանգային արյունակույտի

պատճառով վիրահատված հիվանդներից 148-ի դեպքում իրականացվել է գլխուղեղի ՅՇ հետազոտություն (աղ. 2), որի արդյունքներով 4,1%-ի դեպքում (6) ներզանգային արյունակույտ չի հայտնաբերվել, և թույլ են տրվել ախտորոշման սխալներ (100,0% (6)): Ախտորոշման սխալները գլխուղեղի ՅՇ հետազոտությամբ ներզանգային արյունակույտ հայտնաբերելու դեպքում (142) առկա են եղել 23,2% (33) ($\chi^2 = 16,73, p<0,0001$): Ընդհանուր առմամբ (148), 26,4% դեպքերում են (39) թույլ տրվել ախտորոշման սխալներ, որոնք պայմանավորված են եղել վիրահատության ընթացքում հայտնաբերված ներզանգային վնասվածքային փոփոխությունների տեղակայումամբ, արտահայտվածության աստիճանով (12,8% (19)), ներզանգային արյունակույտի ներվիրահատական հայտնաբերումով (4,1% (6)) կամ ներզանգային արյունակույտի ձևավորումով (9,5% (14)): Վերջինս հայտնաբերվել է առաջնակի ՅՇ հետազոտությունից հետո 24 ժամերին կրկնակի ՅՇ հետազոտությամբ: Այսինքն՝ չնայած ներզանգային ախտաձևաբանական փոփոխությունների՝ դրանց զարգացումների մասին տեղեկատվությունը ստացվում է գլխուղեղի ՅՇ հետազոտությամբ, այնուամենայնիվ ոչ բոլոր դեպքերում է այն արտացոլում ներզանգային վնասվածքային փոփոխությունների տեղակայումն ու արտահայտվածության աստիճանը, որը կարող է

Աղյուսակ 3.

Վնասվածքային սուր ներզանգային արյունակույտի ելքի կախվածությունը գիտակցության խանգարումից

Գիտակցություն	Ելք						Ընդամենը	
	լավ		բավարար		բացասական		n	%
	n	%	n	%	n	%		
ոչ սահմանային	55	64,0	26	30,2	5*	5,8	86	57,0
սահմանային	23	35,4	22	33,8	20*	30,8	65	43,0
ընդամենը	78	51,7	48	31,8	25	16,6	151	100,0

Ծանոթություն. * $\chi^2=19,93, p<0,0001$:

Աղյուսակ 4.

Վնասվածքային սուր ներզանգային արյունակույտի ելքի կախվածությունը վիրահատության ժամկետից

Ելք	Վիրահատության իրականացման ժամկետները						Ընդամենը	
	0-ից մինչև 3 ժամ		3-5 ժամում		5 ժամից հետո		n	%
	n	%	n	%	n	%		
Գիտակցության խանգարման սահմանային վիճակում գտնվող հիվանդներ								
լավ	18	40,9	2	33,3	3	20,0	23	35,4
բավարար	17*	38,6	2*	33,3	3*	20,0	22	33,8
բացասական	9*	20,5	2*	33,3	9*	60,0	20	30,8
ընդամենը	44	67,7	6	9,2	15	23,1	65	100,0
Պարզ գիտակցություն, գիտակցության չափավոր կամ խորը մթազնում								
լավ	23	62,2	5	41,7	27	73,0	55	64,0
բավարար	13	35,1	6	50,0	7	18,9	26	30,2
բացասական	1	2,7	1	8,3	3	8,1	5	5,8
ընդամենը	37	43,0	12	14,0	37	43,0	86	100,0

Проведенные исследования с целью изучения основных закономерностей проявлений возрастного снижения слуха, сопровождающегося УШ, обусловлены необходимостью разработки методов реабилитации лиц с тугоухостью и рационального слухопротезирования.

Выводы

На основании проведенных исследований можно заключить, что возрастная тугоухость закономерно сопровождается УШ, в основном, у лиц в возрасте 51-70 лет; у лиц старческого возраста (70 лет и старше) УШ реже встречается и меньше беспокоит, а также меняется его тональность и интенсивность. Полученные данные можно объяснить реорганизацией центральных слуховых путей и соответствующих зон коры мозга, в которых с возрастом преобладают процессы торможения и ухудшается функция внимания, в результате чего УШ ослабевает или полностью исчезает у лиц старческого возраста.

ЛИТЕРАТУРА

1. Бобошко М.Ю., Ефимова М.В., Савенко И.В. Современные аспекты лечения ушного шума и его лечение у лиц пожилого возраста. Вестник оторинолар., 2011, N2, с. 23-25
2. Гуненков А.В. Возрастные изменения слуха (пресбиакузис). Современные подходы к старой проблеме. Вестник оторинолар., 2007, N3, с. 33-35
3. Миракян Г.А. Аудиологическая характеристика пресбиакузиса по показателям различения фронта нарастания звукового стимула. // Вестник оторинолар., 1987, N4, с. 22-25
4. Овчинников Ю.М., Морозова С.В., Штыкова Н.А., Зозуля Т.В. Медико-социальный аспект реабилитации пожилых больных с кохлеовестибулярными нарушениями. // Мат. 1-го национального конгресса аудиологов. Суздаль, 2004, с. 140
5. Тадевосян Г.И. Помехоустойчивость слухового анализатора при аудиометрии на армянском и русском языках и ее дифференциально-диагностическое значение. Дисс. канд. мед. наук, М., 1992, 248 с.
6. Bosnyak D.J., Roberts L.E. The relation between the amplitude of the 40-Hz auditory steady-state response and the tinnitus percept suggests abnormal neural activity during tinnitus but not during residual inhibition //4th International TRI Conference Frontiers in Tinnitus research, Dallas, Texas, USA, 2010, P. 45-46
7. Fatima T. Husain, Nathan M. Pajor, Barry Horwitz. Neural network differences in tinnitus and hearing loss: an fMRI study.// Dallas, Texas, USA, 2010, P. 21
8. Pederson K.E., Rosenhall U., Meller M.B. Audiology, 1991; Vol. 30 P. 201-211
9. Reiss M., Reiss G. Presbycusis: pathogenesis and treatment. Med. Monatsschr. Pharm., 2009, V. 32, N6, P. 221-225
10. Robert Levine. The brainstem and tinnitus: adjustments to the dorsal cochlear nucleus tinnitus hypothesis inhibition //4th International TRI Conference Frontiers in Tinnitus research, Dallas, Texas, USA, 2010, P. 16

ԱՄՓՈՓՈՒՄ

ՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՔԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱԿԱՆՋԻ ԱՂՄՈՒԿԸ

Թադևոսյան Գ.Ի.¹, Լուսինյան Ն.Ա.¹, Միրաբյան Գ.Ա.¹, Շուքուրյան Լ.Ա.¹, Բալթաբյան Ա.Ս.², Գալեյան Գ.Ս.³

¹ԵՊԲՀ, ԼՕՌ հիվանդությունների ամբիոն

²«Էրեբունի» ԲԿ

³ «Արմենիա» ՀԲԿ

Բանալի բառեր՝ տարիքային ծանրալսություն, ականջի աղմուկ, լսողական ֆունկցիա, աուդիոլոգիական ուսումնասիրություն:

Ներկայիս բնակչության 60 տարեկանից մեծ անձանց 1/3-ը հիմնականում տառապում է ծանրալսությամբ: Մեծահասակ բնակչության մոտավորապես 8%-ը, ունենալով նորմալ լսողություն, ականջներում զգում է սուբյեկտիվ աղմուկ, և տարիքին զուգընթաց նրանց քանակը մեծանում է: Տարիքային ծանրալսությունը բնութագրվում է լսողական անալիզատորում տարբեր աստիճանի դեգեներատիվ և ատրոֆիկ փոփոխություններով:

Տարիքային ծանրալսությունը բնորոշվում է երկկողմանի սիմետրիկ ձայնընկալող ծանրալսությամբ, որը վատանում

է ամեն տասնամյակում, խանգարվում է խոսքի հասկանալիությունը:

Հետազոտվել են 1800 տարեց անձինք տարբեր տարիքային խմբերում, որի արդյունքում հայտնաբերվել է, որ տարիքային ծանրալսությունը օրինաչափորեն ուղեկցվում է ականջի աղմուկով հիմնականում 51-70 տարեկան անձանց դեպքում: 70-ից մեծ անձանց շրջանում ականջի աղմուկը այնքան էլ հաճախադեպ չէ և ավելի քիչ է անհանգստացնում, նաև փոխվում է նրա ինտենսիվությունը և տոնալությունը:

Տարիքային ծանրալսության և ականջի աղմուկի դրսևորման օրինաչափությունների ուսումնասիրությունը ուղղված է վերականգնման մեթոդների մշակմանը և պրոթեզավորման արդյունավետությանը:

SUMMARY

AGE-RELATED HEARING LOSS AND TINNITUS

Tadevosyan G.I.¹, Lusinyan N.A.¹, Mirakyan G.A.¹, Shukuryan L.A.¹, Balbabyan A.S.², Galechyan G.M.³

¹YSMU, Department of ENT Diseases

²MC "Erebouni"

³RMC "Armenia"

Keywords: *age-related hearing loss, tinnitus, hearing function, audiology study.*

Currently, 80% of people over the age of 60 suffer from chronic diseases, 1/3 of which suffer from hearing loss. Approximately 8% of the adult population with normal hearing has tinnitus in the ears and this number increases with age. Age-related hearing loss is characterized by degenerative and atrophic changes in the auditory analyzer.

Age-related hearing loss is characterized by bilateral symmetrical sensorineural age-related hearing loss, which worsens

along with every decade, and the speech disorder occurs in the speech diapason.

1800 adults in various ages have been observed. As a result it was found that mostly adults aged from 51 to 70 have age-related hearing loss accompanied by ear tinnitus.

Tinnitus is more frequent in people over the age of 70, and it is less distressing, and it changes intensity and tonality.

The study of patterns of age-related hearing loss and ear tinnitus is aimed at developing rehabilitative methods of treatment and rational hearing prosthetics.

ՀՏԴ՝ 612.8+591.18

ՇՆՉԱՌՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԻՐՏ-ԱՆՈՒԹՅՈՒՆ ԶԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՖՈՒՆԿՑԻՈՆԱԿԱՆ ԽԱՆՁԱՐՈՒՄՆԵՐԻ ՇՏԿՈՒՄԸ ՇՆՉԱՌԱԿԱՆ ԵՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԱՐԺԱՆՔՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

Կարապետյան Մ.Ա.¹, Ադամյան Ն.Յու.¹, Գրիգորյան Ա.Ս.²¹ ԵՊՀ, Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոն² «Աերոֆլեթս» առողջարարական կենտրոն

Բանալի բառեր՝ ֆունկցիոնալ խանգարում, շնչառական վարժություններ, ֆիզիկական վարժություններ, առողջության շտկում:

Հայտնի է, որ օրգանիզմի ֆունկցիոնալ տարբեր խանգարումների դեպքում հյուսվածքներում զարգանում է թթվածնային անբավարարություն, որը կանխարգելելու կամ շտկելու համար կիրառվում են դեղորայքային և ֆիզիոթերապևտիկ միջոցներ: Ներկայումս հիվանդությունների կանխարգելման և ֆունկցիոնալ խանգարումները շտկելու համար լայնորեն կիրառվում են ֆիզիոլոգիական մեթոդները, որոնցում առաջնային են շնչառական մարզումները: Այդ նպատակով գործում են առողջարարական կենտրոններ, որտեղ ֆիզիկական ծանրաբեռնվածության հետ կիրառվում են շնչառական վարժանքներ: Հայտնի են շնչառական վարժանքների մի շարք մեթոդներ՝ Ստրելնիկովայի, Աղաջանյանի, Ֆրոլովի, յոզայի և այլն [2, 7, 8]: Բոլոր մեթոդների հիմքում արյան մազանոթային շրջանառությունը ակտիվացնելու միջոցով օրգանիզմի հյուսվածքները թթվածնով ապահովելն է:

Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել շնչառության և ֆիզիկական վարժությունների համակցված ազդեցությունը օրգանիզմի վրա ֆունկցիոնալ որոշ խանգարումների դեպքում:

Հետազոտության մեթոդը

Սույն հետազոտությունը կատարվել է «Աերոֆլեթս» առողջարարական կենտրոնում, որտեղ շնչառական և ֆիզիկական տարբեր վարժությունների համադրմամբ մշակվել է առողջարարական հատուկ մեթոդ:

Հետազոտվել են կենտրոն դիմած 46 անձինք, որոնք գանգատվել են գլխացավից, գլխապտույտից, ականջներում աղմուկից, ողնաշարի տարբեր հատվածների ցավերից, հոդացավերից, անքնությունից, օրգանիզմի ընդհանուր թուլությունից: Դիմողները մարզիչների հսկողությամբ կատարել են ֆիզիկական վարժություններ՝ զուգակցված մեկ ժամ տևողությամբ շնչառական հատուկ վարժանքներով: Շնչառական

այս վարժությունների առանձնահատկությունն այն է, որ խոր ներշնչմանը հաջորդում է խոր արտաշնչում և շնչառության դադար: Ֆիզիկական վարժությունները, որոնք ընդգրկում են հենաշարժիչ համակարգի բոլոր բաժինները, կատարվում են այդ ընթացքում՝ մինչև ինքնաբերական ներշնչում: Ֆիզիկական վարժությունների ընթացքում շնչառության դադարի պահին, կատարվում է նաև ներքին օրգանների ակտիվ մերսում՝ որովայնի մկանները կծկելու և թուլացնելու միջոցով: Դիմողների շրջանում ֆիզիոլոգիական ցուցանիշները գրանցվել են մարզումները սկսելուց առաջ և մեկամսյա մարզումներից հետո: Գրանցումները կատարվել են ռուսական «Диамант» ռեռանալիզատորով: Ցուցանիշների գրանցումը կատարվել է ձեռքերի և ոտքերի վրա տեղադրված էլեկտրոդներով՝ չորս արտածմամբ: Մարմնի տարբեր մասերում ռեռանալիզատորով գրանցվում է արյան շրջանառության հարվածային ուժը, որի հիման վրա համակարգչային ծրագրով կատարվում է տարբեր ցուցանիշների վերլուծություն (արյան շրջանառության, սրտի, շնչառական համակարգի գործնեություն): Գրանցած բազմաթիվ ցուցանիշներից մենք վերլուծության ենք ենթարկել մի քանիսը՝ արյան թոպեական ծավալը, սրտի և շնչառության հաճախությունները և հյուսվածքների թթվածնային հագեցվածությունը:

Տվյալները վերլուծելու համար հետազոտվողները բաժանվել են տարիքային երեք խմբերի: Առաջին խումբը կազմել են 18-30, երկրորդ խումբը՝ 31-50, երրորդ խումբը՝ 51 տարեկան և ավելի տարիքով անձինք: Հետազոտությունը համապատասխանում է Բիոէթիկայի ինստիտուցիոնալ կոմիտեի դրույթներին և Հելսինկյան դեկլարացիայի սկզբունքներին:

Հետազոտության արդյունքները և քննարկումը

Տվյալների վերլուծությունը ցույց տվեց, որ առաջին խմբի (18-30 տարեկան) հետազոտվողների դեպքում սրտի կծկումների և շնչառության հաճախության նվազմամբ ավելանում է արյան թոպեական ծավալը (աղ. 1): Այստեղից հետևում է, որ շնչառական և ֆիզիկական մարզումների հետևանքով մեծանում է

Աղյուսակ 1. Տարբեր խմբերի հետազոտողների ուսումնասիրվող ցուցանիշների փոփոխությունները մարզումից առաջ և հետո

Ուսումնասիրվող ցուցանիշներ	I խումբ			II խումբ			III խումբ		
	մինչև մարզումը	մարզումից հետո	P	մինչև մարզումը	մարզումից հետո	P	մինչև մարզումը	մարզումից հետո	P
արյան թուրքային ծավալ (լ)	3,9±0,3	5,2±0,4	<0,05	3,4±0,2	4,4±0,3	<0,05	3,2±0,8	4,1±1,2	>0,05
սրտի հաճախություն (զարկ/րոպե)	82±3,1	75±2,2	<0,05	92±3,2	82±3,3	<0,05	95±4,1,	90±3,3,	>0,05
շնչառության հաճախություն (շնչ/րոպ)	19±0,2	14±0,1	<0,05	20±0,7	17±0,3	<0,05	23±1,7	20±1,3	>0,05
հյուսվածքների թթվածնային հագեցվածություն (%)	88±2,4	95±2,8	<0,05	85±1,2	90±2,8	<0,05	82±4,3	85±4,8	>0,05

սրտամկանի կծկման ուժը: Դրա շնորհիվ մեկամսյա մարզումներից հետո վերանում են այն ախտանիշները, որի պատճառով դիմել են կենտրոն:

Երկրորդ խմբի դեպքում (31-50 տարեկան) փոփոխությունների դինամիկան նույնն է, միայն նվազ արտահայտված:

Երրորդ խմբում (51 տարեկան և ավելի տարիք) հետազոտվող ցուցանիշների փոփոխությունները ունեն նույն ուղղվածությունը, սակայն դրանք հավաստի չեն:

Բոլոր խմբերում մեկամսյա վարժանքներից հետո դիմողների մեծամասնության դեպքում բարձրանում է ինքնազգացողությունը, քանի որ անհետանում, կամ զգալիորեն մեղմանում են ախտանիշները՝ գլխացավը, գլխապտույտը, ականջներում աղմուկը, անքնությունը, կարգավորվում է արյան ճնշումը: Յետևաբար, այս ախտանիշների հիմքում ոչ միայն գլխուղեղի արյան շրջանառության ենթադրյալ խանգարումն է, այլև կան ուրիշ պատճառներ ևս, որոնք չեն բացահայտվում այս հետազոտության շրջանակներում: Սակայն ակնհայտ է, որ դրական այս դինամիկան պայմանավորված է շնչառությամբ:

Առաջին հայացքից անհասկանալի է թվում այն, որ նշված ֆիզիոլոգիական տարաբնույթ խանգարումները շտկվում են միևնույն մեթոդով: Տարբեր հետազոտություններից [9] պարզվել է, որ շատ հիվանդությունների դեպքում օրգանիզմում զարգանում է թթվածնային անբավարարություն: Ընդ որում, օրգանիզմի հյուսվածքներում այն զարգանում է միևնույն մեխանիզմով՝ սկզբում՝ օրգան-համակարգերի մակարդակում (շնչառություն, սիրտ-անոթային համակարգ), հետո՝ հյուսվածքային մակարդակում (խանգարվում է թթվածնի յուրացումը), ապա՝ բջջային մակարդակում (խանգարվում է միտոքոնդրիումների գործունեությունը): Թթվածնային անբավարարությունը

լրացնելու արդյունավետ միջոց է շնչառության հաճախության կամային կարգավորումը [3,4] :

«Աերոֆլեթս» կենտրոնում վարժանքների ընթացքում խիստ կարևորվում է շնչառության ժամանակ թոքերի լրիվ օդափոխությունը, որն իրականացվում է որովայնային և կրծքային ընդմիջող շնչառությամբ: Որովայնային շնչառության ժամանակ ստոծանու շարժումները մերսում են որովայնի օրգանները՝ նրանցում ակտիվացնելով արյան շրջանառությունը: Դա նպաստում է այնտեղից կյանքափոխանակության արգասիքների հեռացմանը, որոնք կուտակվելով կարող են ինքնաթունավորման պատճառ դառնալ դրանից բխող հետևանքներով՝ գլխացավ, գլխապտույտ, սրտխառնոց և այլն:

18-30 տարեկանների խմբում մեկամսյա վարժանքներից հետո սրտի հաճախության փոքրացմանը զուգընթաց նկատվում է նաև շնչառության հաճախության նվազում (աղ. 1): Մյուս խմբերում դա ավելի թույլ է արտահայտված: Գոյություն ունի դրական սերտ փոխկապվածություն շնչառության թուրքային ծավալի, սրտի կծկումների հաճախության և արյան թուրքային ծավալի միջև: Այսինքն՝ միևնույն տևողությամբ ֆիզիկական աշխատանք կատարելիս շնչառության թուրքային ծավալի փոքրացումն ուղեկցվում է սրտի հաճախության փոքրացմամբ, որը նպաստում է վերջինիս գործունեության խնայողությանը [10] :

Տվյալ հետազոտությամբ պարզվել է, որ խոր արտաշնչումից հետո շնչառության դադարը օրգանիզմում ստեղծում է հիպերկապնիա՝ CO₂-ի ավելացում, որն օրգանիզմի տարբեր ֆունկցիոնալ խանգարումների դեպքում ունի որոշակի շտկող ազդեցություն: CO₂-ի կուտակումը հանգեցնում է ածխաթթվի առաջացմանը, որը կարևոր

նշանակություն ունի բջիջների պլաստիկ փոխանակության գործընթացներում [1]:

Որոշ հետազոտություններից պարզվել է, որ նորմոբարիկ ինտերվալային հիպոօքսիայի հետևանքով, երբ օրգանիզմը որոշակի ընդմիջումներով շնչում է թթվածնի նորմայից քիչ, իսկ ածխաթթու գազի շատ պարունակությամբ գազային խառնուրդ, դեռահասների շրջանում նվազում է արյան թթվածնային հագեցվածությունը, իսկ հյուսվածքներում թթվածնի լարվածությունը մեծանում է: Այսինքն՝ օրգանիզմում թթվածնի քանակը վերաբաշխվում է հոգուտ բջիջների և հյուսվածքների մետաբոլիկ գործընթացների [5]: Դրա արդյունքում ակտիվանում են նյութափոխանակության գործընթացները, և լավանում է ինքնազգացողությունը: Կարելի է ասել, որ չափավոր պարբերական թթվածնաբաղձ օրգանիզմի ֆունկցիոնալ որոշ խանգարումների դեպքում շտկող ազդեցություն ունի՝ ի տարբերություն քրոնիկական թթվածնաբաղձի, որը զարգանում է շատ հիվանդությունների դեպքում արյան մազանոթային շրջանառության խանգարման հետևանքով:

Վարժանքների ժամանակ իրար հաջորդող շնչառական երկու ցիկլի՝ խոր ներշնչման և խոր արտաշնչման ժամանակ կատարվում է թոքերի լրիվ օդափոխություն, որը բացառում է օդի կանգային երևույթները թոքերի վերին և ստորին հատվածներում: Հայտնի է, որ թոքերում օդի կանգային վիճակը նպաստավոր միջավայր է ախտածին մանրէների համար, որոնք կարող են հիվանդությունների պատճառ դառնալ՝ առաջացնելով շնչարգելություն, հևոց և այլն:

Ակնհայտ է, որ մեկ ժամ տևող վարժությունների ժամանակ կատարվում է շնչառության հաճախության կամային փոքրացում (արտաշնչման փուլում շնչառության հնարավոր տևական դադարի շնորհիվ), որի հետևանքով հետազոտվողների շրջանում մարզումներից հետո նկատվում է բնականոն շնչառության հաճախության նվազում, որն ինքնին դրական երևույթ է: Մեկ րոպեի ընթացքում դա մեծ ցուցանիշ չէ, բայց օրվա ընթացքում նկատելի խնայողական արդյունք է ապահովում:

Շնչառական յուրաքանչյուր շարժման ժամանակ որոշակի էներգիա է ծախսվում վերին շնչուղիների պատերի դիմադրությունը, թոքաբշտերի պատերի առաձգականության ուժը, որովայնի խոռոչի և կրծքավանդակի պատերի դիմադրությունը հաղթահարելու համար: Բնականաբար, շնչառական շարժումների քանակը պակասելու հետևանքով էներգիան որոշակիորեն խնայվում է, որը կարող է ծախսվել օրգանիզմի հարմարվողական այլ մեխանիզմների գործունեության համար:

Մարզումների շտկող ազդեցությունը պայմանավորված է ոչ միայն շնչառական վարժությունների արդյունավետությամբ, այլև նրանց համակցված ֆիզիկական վարժություններով, որի ընթացքում գործի են դրվում հենաշարժական ապարատի բոլոր տարրերը: Արդյունքում ակտիվանում է ծայրամասային արյան շրջանառությունը, բարելավվում են մկանների սնուցումը և նյութափոխանակության արգասիքների հեռացումը [6]: Մեր նախորդ հետազոտություններից պարզվել է, որ բուժական ֆիզկուլտուրայի խմբերում ընդգրկված ուսանողների (Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի) շրջանում միայն շնչառական վարժությունները՝ առանց ֆիզիկական վարժությունների, և, հակառակը, միայն ֆիզիկական վարժությունները բավարար արդյունք չեն ապահովում [4]:

Այսպիսով, շնչառության և ֆիզիկական վարժությունների համակցումը շտկող ազդեցություն է թողնում օրգանիզմի ֆունկցիոնալ որոշ խանգարումների դեպքում: Հնարավոր է՝ այս մարզումների ընթացքում փոփոխվում են շնչառական ֆերմենտների ակտիվությունը և օրգանիզմի նյութափոխանակության հարմարվողական մեխանիզմները, բարելավվում է հյուսվածքների թթվածնային հագեցվածությունը [3]: Արդյունքում անհետանում են օրգանիզմի անհանգստացնող ֆունկցիոնալ խանգարումները, բարելավվում է մարդկանց ինքնազգացողությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Агаджанян Н.А., Полунин И.Н., Степанов В.К., Поляков В.Н. Человек в условиях гипоксии и гиперкапнии. Астрахань – Москва, 2001. 340с.
2. Вилунас Ю.Г. Дыхание, несущее здоровье. СПб., 1997. 347с
3. Казьмин, В. Д. Дыхательная гимнастика. Серия «Панацея»/ В. Д. Казьмин. – Ростов-н/Д: Феникс, 2000, 224 с.
4. Карапетян М.А., Абрамян С. А., Акопян Н. С., Надирян М. В., Адамян Н.Ю. Эффективность метода произвольного уменьшения дыхательного ритма у студентов специальных медицинских групп физкультуры.//Гигиена и санитария, 2, 2008, с. 80-84.
5. Колчинская А. З. Интервальная гипоксическая тренировка. Эффективность. Механизмы действия. Киев, 1992. 160с.
6. Лукьянова Л.Д. Биоэнергетические механизмы кислородного гомеостаза при адаптации к гипоксии: сигнальная функция митохондрий. Мат. XII межд. Сим. «Эколого-физиологические проблемы адаптации», М. 2007, с.266.
7. Машина С.Ю., Александрин В.В., Горячева А.В. и др. Адаптация к гипоксии предупреждает нарушения мозгового кровообращения при нейродегенеративном повреждении. //Бюлл.эксп. биол. и мед.//, Т.142,2006, с. 132-135.
8. Сафонов В.А. Как дышем, так и живем. М., национальное обозрение, 2004. 135 с.
9. Сороко С.И., Родкина Т.П., Изменение центральных вегетативных механизмов регуляции при воздействии экспериментальной высокогорной гипоксии. Материалы симпоз. "Интеграция механизмов регуляции функций. Мойкоп, 1996, с.77-78.
10. Щетинин, М. Н. Дыхательная гимнастика А.Н. Стрельниковой / М. Н. Щетинин. – М.: Метафора, 2002. 128 с.

РЕЗЮМЕ

КОРРЕКЦИЯ ФУНКЦИОНАЛЬНЫХ НАРУШЕНИЙ ДЫХАТЕЛЬНОЙ И СЕРДЕЧНО-СОСУДИСТОЙ СИСТЕМ С КОМБИНИРОВАННЫМ ПРИМЕНЕНИЕМ ДЫХАТЕЛЬНЫХ И ФИЗИЧЕСКИХ ТРЕНИРОВОК

Карапетян М.А.¹, Адамян Н.Ю.¹, Григорян А.С.²

¹ ЕГУ, Кафедра физиологии человека и животных

² Оздоровительный центр "Аэрофлекс"

Ключевые слова: функциональные нарушения, дыхательные упражнения, физические тренировки, коррекция здоровья.

Известно, что для профилактики или коррекции различных функциональных нарушений применяются не только медикаментозные, но и физиотерапевтические методы. В практике широко применяются также физиологические методы, в том числе и дыхательные тренировки. Цель данного исследования выяснить комбинированное влияние дыхательных и физических упражнений на общее состояние организма при некоторых функциональных нарушениях.

Данное исследование проводилось в лечебном центре "Аэрофлекс", где применяется специально разработанный корректирующий метод комбинирования дыхательных и физических упражнений. В данный центр обращаются люди разного возраста, которые жалуются на головокружение, шум в ушах, тошноту, одышку, головную боль, боли в суста-

вах, боли в спине, бессонницу, общее недомогание.

Продолжительность тренировок один месяц. В начале каждого занятия участники делают несколько интенсивных вдохов и выдохов. Затем на выдохе задерживают дыхание и делают активные движения брюшных мышц, массируя внутренние органы брюшной полости, до следующего спонтанного вдоха. В результате этих движений улучшается кровоснабжение внутренних органов, усиливается вывод метаболических веществ. Занятие продолжается включением в движение всех мышц организма. Продолжительность каждого занятия один час. Задержание дыхания на выдохе в организме создает гипоксию и гиперкапнию, которая, как известно из многочисленных научных работ, улучшает (активизирует) адаптивные механизмы и стимулирует метаболические процессы организма. В результате останавливается развитие патологических процессов, улучшается самочувствие пациентов, исчезают симптомы функциональных нарушений.

SUMMARY

CORRECTION OF FUNCTIONAL DISTURBANCES OF RESPIRATORY AND CARDIOVASCULAR SYSTEMS WITH COMBINED USAGE OF RESPIRATORY AND PHYSICAL EXERCISES

Karapetyan M.A.¹, Adamyan N.Y.¹, Grigoryan A.S.²

¹ YSU, Department of Human and Animal Physiology

² Health Center "Aeroflex"

Keywords: *functional disorders, respiratory exercises, physical trainings, correction of health.*

It is known that during various functional disturbances tissues undergo oxygen deficiency, for prophylactics and correction of which medication and physiotherapy are used. Physiological methods like respiratory exercises are also widely used in practice. The purpose of the research is to investigate the combined influence of breathing and physical trainings on the organism during some functional disorders.

This research took place at the "Aeroflex" medical center, where specially developed correction method of combined respiratory and physical exercises is used. People of different ages come to this center with complaints about dizziness, noise in the ears, nausea, shortness of breath, headache, joint ache, back ache, sleeplessness, and general diseases.

The duration of these exercises is one month. At the beginning of each session the participants do several intensive in-hales and exhales. While exhaling they keep their breath and do active movements with the abdominal muscles, as a result massaging their internal organs, until the next spontaneous inhale. This improves blood circulation in the internal organs and increases withdrawal of metabolic substances. The session continues with the inclusion of the movement of all the body muscles. Each session lasts an hour. While keeping breath, an oxygen deficiency is created in the body, which, as it is known from many scientific publications, activates and improves adaptive mechanisms and stimulates metabolic processes of the body. As a result, the development of pathological processes is stopped, the overall wellbeing of patients increases, and the symptoms of functional disturbances disappear.

ԽՆԴՐԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ (PROBLEM-BASED LEARNING) ԱԽՏԱՖԻԶԻՈՒՄԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԴԱՐԱՊՄՈՒՆԵՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ

Ավետիսյան Ս.Ա., Վարդերեսյան Ս.Գ., Գրիգորյան Ա.Ս., Մկրտումյան Ռ.Ռ. ԵՊԲՀ, ախտաֆիզիոլոգիայի ամբիոն

Բանալի բառեր՝ բարձրագույն բժշկական կրթություն, ուսանողակենտրոն ուսուցում, խնդրի վրա հիմնված ուսուցում, ախտաֆիզիոլոգիայի գործնական պարապմունքներ:

Խնդրի վրա հիմնված ուսուցումը որպես ուսուցման ակտիվ եղանակ

«Կրթությունը փաստերի ուսուցումը չէ, այլ մտածել սովորելն է»: Ալբերտ Էյնշտեյն

Խնդրի վրա հիմնված ուսուցումը (ԽՅՈՒ) իրականացվում է կոնկրետ խնդիրներ ուսումնասիրելու և լուծումներ փնտրելու միջոցով: Այն ուսանողակենտրոն ուսուցման եղանակ է, որն ուսանողին հնարավորություն է ընձեռում լինելու ոչ թե դասախոսի կողմից ներկայացվող նյութը պասիվ լսողի, «կլանողի» դերում, այլ դառնալու ուսուցման պրոցեսի ակտիվ մասնակից, կիրառելու իր գիտելիքները՝ առաջարկված խնդիրը լուծելու համար, փնտրելու անհրաժեշտ ինֆորմացիան, հայտնելու սեփական տեսակետները և հիմնավորելու դրանք: Ուսանողի կողմից տեսական նյութն ուսումնասիրվում է հիմնականում գործնական պարապմունքից դուրս, քանի որ ուսանողին տրամադրվում է ամբողջ անհրաժեշտ ինֆորմացիան դասին պատրաստվելու համար: ԽՅՈՒ-ն հնարավորություն է տալիս ուսանողին գնահատելու իր պատրաստվածության մակարդակը, այսինքն՝ որքանով է նա յուրացրել, և ոչ թե միայն մտապահել ինֆորմացիան:


ԽՅՈՒ-ն, ի տարբերություն ավանդական ուսուցման, ենթադրում է ոչ միայն անհատական, այլև խմբային աշխատանք՝ խրախուսելով ուսանողների հաղորդակցական հմտությունների զարգացումը և թիմային աշխատանքին սովորելը:

ԽՅՈՒ-ում դասախոսի դերը ոչ թե ինֆորմացիա փոխանցելն է, այլ ուսուցման պրոցեսը ուղղորդելը և վերահսկելը (From sage on the stage to guide on the side [7]): Զննարկման համար նրա կողմից ընտրված խնդիրները և դրանց վերաբերյալ տրվող հարցերը պետք է օգնեն ուսանողին կիրառելու գիտելիքը

տարբեր կոնստեքստներում, խթանեն ինքնուրույն մտածողությունը, նպաստեն խոր հասկացողության ձեռքբերմանը:

ԽՅՈՒ-ն կարող է օգտագործվել ինչպես ի լրումն ավանդական ուսուցման, այնպես էլ որպես «մաքուր» մոդել, երբ ուսումնական ծրագիրն ամբողջությամբ համապատասխանեցվում է ԽՅՈՒ-ին (նկ. 1):


Մեր ամբիոնում կիրառվում է ԽՅՈՒ-ի խառը մոդելը. խնդրի լուծմանն ուղղված քննարկումները լրացնում են ավանդական դասախոսությունները և սեմինար քննարկումները:



Նկար 1. ԽՅՈՒ-ի կիրառման կերպերը

Նորավարտ մասնագետին ներկայացվող այսօրվա պահանջները բարձր են. նա պետք է կոնկրետ ոլորտում կարողանա կիրառել ստացած գիտելիքները, ունենա հաղորդակցական լավ հատկանիշներ, ինքնուրույն մտածելակերպ, կարողանա օգտվել համապատասխան ինֆորմացիոն ռեսուրսներից և հիմնավորված դատողություններ անել: Ուստի կրթական համակարգում «թեժ» թեմա է ուսուցման արդյունավետության բարձրացման անհրաժեշտությունը: ԽՅՈՒ-ն այս առումով մեծ ուշադրության է արժանանում: «Երբ գիտակցում ես, թե որքան քիչ բան են ուսանողները հասկացել կամ մտապահել մեկ կիսամյակ խարիզմատիկ դասախոսություններ լսելուց հետո, հիասթափվում ես: Եթե այդ հիասթափությունը չարհամարհվի, այն կուղղորդի մտորումները դեպի այն, թե ինչ է

Նշանակում «դասավանդել» և «սովորել»: Ավանդական ուսուցման փոխարեն ԽՅՈՒ-ն առաջարկում է գրավիչ այլընտրանք՝ շեշտադրելով ոչ թե այն, թե *ինչ է ամբիոնը դասավանդում*, այլ այն, թե *ինչ է ուսանողը սովորում*: Բովանդակությունը մնում է կարևոր, սակայն ԽՅՈՒ-ն արժևորում է հենց ուսուցման պրոցեսը» [11]:



Նկար 2. Կոզմոսիկ բուրգի կառուցվածքը (Բլումի տաքսոնոմիան)

ԽՅՈՒ-ն օգնում է ոչ միայն ստանալու և մտապահելու նոր ինֆորմացիա, այլև ձևավորում և զարգացնում է ինֆորմացիայի մշակման, կիրառման, վերլուծության և համադրության, քննադատական և ստեղծագործական մտածելակերպի արժեքավոր ունակությունները: Սրանք, ըստ Բլումի տաքսոնոմիայի, ձևավորում են ավելի բարձր կոզմոսիկ մակարդակները (նկ. 2):

1998թ. Կարնեգի հիմնադրամի “Reinventing Undergraduate Education: A Blueprint for America’s Research Universities” հաղորդագրում նշված է. «Ավանդական դասախոսությունները և ուսանողների կողմից դրանց գրառումը այն ժամանակների համար էր, երբ գրքերը թանկ էին և անհասանելի, և դասախոսությունը գիտելիք փոխանցելու արդյունավետ միջոց էր» [6]: Այժմ, երբ ինֆորմացիան ավելի հասանելի է, կրթական ծրագրերը հնարավորություն ունեն ջանքերն ուղղելու առավելապես ինֆորմացիայի մշակման, կիրառման հմտությունների զարգացմանը: Դասընթացի պարունակությունը մնում է կարևոր, սակայն դրան այլևս չի տրվում եզակի կարևորություն. ինֆորմացիայի մենենջմենտի հմտություններն առկա չեն նույնպես կարևոր են, որքան ինֆորմացիայի ձեռքբերումը [9]: Ընդ որում, հաշվի առնելով այն, որ հնարավոր չէ մատուցել համապարփակ ինֆորմացիա, ինչպես նաև հաշվի առնելով, որ արդի գիտական առաջընթացի պայմաններում ներկայումս մատուցված նյութը վաղը կարող է հնանալ, ինֆորմացիա մշակելու հմտությունների զարգացումը դառնում է շատ կարևոր, քանի որ ուսանողին ունակ է դարձնում ինքնուրույն

սովորելու ամբողջ կյանքի ընթացքում: «Որպես կլինիցիստներ՝ մեր առօրյա կյանքում մենք ձգտում ենք ստեղծել որակի շարունակական բարձրացման մշակույթ: Մենք պետք է ջանանք ստեղծել նույն մշակույթը մեր կրթական կյանքում» [10]:

Բազմաթիվ հետազոտություններ են կատարվում համեմատելու ԽՅՈՒ-ի և ավանդական ուսուցման արդյունավետությունն ինչպես ուսումնական պրոցեսի ընթացքում, այնպես էլ հետագա աշխատանքային գործունեության ընթացքում [1]: Ստացված տվյալները վկայում են ԽՅՈՒ-ի արդյունավետության մասին՝ ժամանակակից պահանջներին համապատասխան մասնագետ պատրաստելու առումով:

ԽՅՈՒ-ի արդյունավետությունը պայմանավորված է նաև նրանով, որ այն կրկնում է սովորելու բնական ընթացքը. սկզբում առաջարկվում է իրական խնդիրը, ապա ջանքեր են գործադրվում այն լուծելու ուղղությամբ՝ կիրառելով առկա գիտելիքները և/կամ փնտրելով պակասող ինֆորմացիան (ճիշտ այնպես, ինչպես մարդկությունը իր զարգացման պատմության ընթացքում, բախվելով տարբեր կարիքների և խնդիրների, ուսումնասիրել է բնության օրենքներն այդ խնդիրները լուծելու համար և ակամայից զարգացրել գիտությունը՝ իրական **problem-based learning**):

Եվ վերջապես, բացի նրանից, որ ԽՅՈՒ-ն արդյունավետ է և օգտակար, այն մասնակիցների կողմից գնահատվում է նաև որպես հաճելի [2], քանի որ նորույթ է, հետաքրքիր է, պարզևս է շփման, հետախուզման և բացահայտումների հաճույք՝ ստեղծելով դրական հուզականություն և տրամադրվածություն:

Դեպքի ուսումնասիրություն (case study)

«Ուսուցման իսկապես դժվար մասը ոչ թե դասի նյութը ներկայացնելն է, այլ այնպես անել, որ ուսանողը ներգրավվի դրանում»:
Ռոբերտ Լիմսոն

Ախտաֆիզիոլոգիայի գործնական պարապմունքներին ԽՅՈՒ-ն ամենից հաճախ իրականացվում է դեպքի ուսումնասիրության (case study) միջոցով: Սովորաբար դա կլինիկական դեպք է՝ հիվանդության պատմություն: Այն շատ օգտակար է, քանի որ օգնում է սովորելու որևէ թեմա այն համատեքստում, որն առկա է իրական կյանքում՝ դարձնելով գիտելիքն ավելի մնայուն և կիրառելի [1]: Բժշկական կրթության կարևորագույն խնդիրներից է տեսության և պրակտիկայի միջև առկա բացի լրացումը, որին էլ միտված է կլինիկական դեպքի ուսումնասիրությունը:

Կարևոր է նշել, որ այն հնարավորություն է տալիս հաղթահարելու միջառարկայական պայմանական սահմանները, ինֆորմացիայի ըմբռնումը՝ դարձնելով ավելի ամբողջական և ապահովելով հորիզոնական ու ուղղահայաց ինտեգրացիան: Այս դեպքում քննարկումը կատարվում է ինդուկտիվ մեթոդով՝ մասնավորից դեպի ընդհանուրը, որը լավագույնս լրացնում է ավանդական դասախոսությանը: Վերջինս էլ հիմնականում ներկայացնում է թեմայի շուրջ առկա ընդհանուր գաղափարները և մոտեցումները:

Ախտաֆիզիոլոգիայի գործնական պարապմունքների ընթացքում սովորաբար կիրառվում են թեմային առնչվող տիպային կլինիկական դեպքեր՝ շարադրված հիվանդության պատմությամբ: Կատարվում է դեպքի ախտաֆիզիոլոգիական վերլուծություն. վեր են հանվում պատճառահետևանքային կապերը, կազմվում է պաթոգենետիկ շղթա, որում ներառվում է նաև դեպքի մեջ նշված մորֆոլոգիական, կլինիկական և լաբորատոր տվյալների ախտածագումը: Դա օգնում է ուսանողին կապակցելու հիվանդության էթիոլոգիան և պաթոգենետիկ հիվանդության դրսևորումների հետ, լավ հիմք է ստեղծում բարձր կուրսերում ուսուցանվող կլինիկական առարկաները յուրացնելու համար: Այդպիսի մոտեցումը նաև օգնում է ուսանողին՝ արդեն որպես կլինիցիստի հետազայում, ներգրավված լինելու գիտական հետազոտությունների մեջ՝ շնորհիվ կլինիկական դեպքերի հետևում հիմնարար ախտածնական մեխանիզմները ճանաչելու վարժվածության [3]: Պաթոգենետիկ շղթայի հիման վրա քննարկվում են բուժման հնարավոր ուղղությունները (հորիզոնական ինտեգրացիա ֆարմակոլոգիայի հետ): Կլինիկական դեպքի ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում շեշտադրելու կարևոր տարրերը, ինչպիսիք են հիվանդի տարիքը, սեռը, ազգությունը, կլինիկական կամ լաբորատոր կոնկրետ տվյալը, որոնք ընդհանուր բնույթի քննարկումների ժամանակ հաճախ տեսադաշտից դուրս են մնում, սակայն կարևոր են տիպային դեպքը մտապահելու համար:

Կլինիկական դեպքերի վերլուծությունը նպաստում է ուսանողների կայուն ընգրկվածությանն ուսումնական պրոցեսում: Ուսանողները մեծ հետաքրքրությամբ են մասնակցում դասին՝ ակնարկելով, որ կլինիկական դեպքերի վերլուծության ընթացքում նրանք սկսում են հասկանալ իրական բժշկության «համն ու հոտը»,

զգում են իրենց որպես բժիշկ, իսկ երբեմն նաև որպես «դոկտոր Զաուս»: Դասախոսի համար դեպքի ընտրությունը կամ կազմումը ևս մեկ հնարավորություն է՝ մտորելու, պրպտելու, կրեատիվ լուծումներ գտնելու համար, որը շարունակական բժշկական կրթություն է ապահովում նաև դասախոսի համար:

Նշենք, որ կլինիկական դեպքի քննարկման ժամանակ ուսանողին առաջարկվող հարցադրումները կարող են լինել ինչպես թեստային (այսինքն՝ ընտրություն սահմանափակ թվով պատասխանների միջև), այնպես էլ «բաց» հարցերով, ընդ որում վերջիններս պահանջում են ուսանողից ավելի բարձր մտավոր աշխատանք և լավագույնս համապատասխանում են ԽՅՈւ-ի հիմնական նպատակներին: Որպես օրինակ ներկայացնենք «Կալցիումի և ֆոսֆորի փոխանակության խանգարում» թեմայի գործնական պարապմունքին վերլուծվող կլինիկական դեպքը [12]:

Մարիա Ռենալդին 52 տարեկան է: Նա տառապում է գլյուտենային էնտերոպաթիայով: Լուծը և քաշի կորուստը ի հայտ են եկել, երբ նա 35 տարեկան էր: Ախտորոշումը հաստատելուց հետո նրան նշանակվել է գլյուտենից զուրկ սննդակարգ, ուստի նա ստիպված էր բացառել ցորենից պատրաստված կերակրատեսակների օգտագործումը: Երբ նա խստորեն պահպանում էր նշանակված սննդակարգը, լուծը դադարում էր, քաշը՝ կարգավորվում, և նրա ինքնազգացողությունը լավանում է: Սակայն լինելով իտալուհի՝ նա դժվարանում էր հրաժարվել իր համար սովորական և սիրելի կերակրատեսակներից: Մի քանի տարի առաջ Մարիա Ռենալդին գտավ կոմպրոմիսային տարբերակ իր սննդային սովորությունները և սննդակարգի պահանջները բավարարելու համար՝ միայն կիրակի օրերը իրեն թույլ տալով մեկ կտոր սպիտակ հաց նախաճաշին և մակարոնի փոքր չափաբաժին՝ ճաշին: Այսպիսով, նրան հաջողվում էր պահպանել կայուն քաշ և ունենալ կղզագատում օրը 3-4 անգամ: Վերջին մեկ տարում սկսել են ոտքերը ուժեղ ցավել, հատկապես քայլելիս և նույնիսկ կանգնելիս: Ցավերը տեղակայված են ոչ թե հողերում, այլ ազդրի և սրունքի ոսկրերում: Հորիզոնական դիրքն արագ թեթևացնում է ցավը: Օբյեկտիվ քննության տվյալներն են. քաշը՝ 48կգ, հասակը՝ 168սմ, 26-ը՝ 110/70, պոլսը 80 զարկ/րոպե: Ոլոքների առաջային մակերեսների շոշափումը ցավոտ է:

Լաբորատոր սովալներն են.

Ցուցանիշ	Հիվանդի մոտ	Նորմայում
կալցիում	72մգ/լ	85-105մգ/լ
ֆոսֆատ	18մգ/լ	30-45մգ/լ
ալբումին	43մգ/լ	35-55մգ/լ
կրեատինին	7մգ/լ	3-15մգ/լ
հիմնային ֆոսֆատազ	306մգ/լ	30-120մգ/լ
պարաթիրոյդ	500պգ/մլ	10-65պգ/մլ
25-OH-վիտամին D ₃	6նգ/մլ	ամռանը՝ 15-80պգ/մլ ձմռանը՝ 14-42պգ/մլ

Կլինիկական դեպքը քննարկելիս ուսանողին առաջարկվում է պատասխանել հարցերին և կատարել առաջադրանքներ, օրինակ՝

- ◆ Ինչո՞վ է պայմանավորված հիվանդի հիպոկալցեմիան, ինչո՞ւ՞ է նշված նաև ալբումինի մակարդակը:
- ◆ Պարաթիրոյդի մակարդակի բարձրացումը առաջնային, թե՛ երկրորդային բնույթ ունի:
- ◆ Ինչո՞ւ է ստուգվել կրեատինինի մակարդակը:
- ◆ Ի՞նչ կապ կա գլյուտենային էնտերոպաթիայի և առկա հիպոկալցեմիայի միջև:
- ◆ Կազմել գլյուտենային էնտերոպաթիայից մինչև ոսկրային ցավերի առաջացումը նկարագրող պաթոգենետիկ շղթան:
- ◆ Գծել կալցիում-պարաթիրոյդ փոխհարաբերությունն արտահայտող նոմոգրամը և բացատրել հնարավոր շեղումների պատերճները:
- ◆ Բացատրել հիվանդի մոտ հիպոֆոսֆատեմիայի մեխանիզմը:
- ◆ Տվյալ հիվանդի դեպքում ոսկրային ցավերի զարգացման պաթոգենետիկ մեխանիզմը և ինչ դեր կարող են ունենալ հիվանդի տարիքը և սեռը:
- ◆ Պաթոգենետիկորեն հիմնավորված ինչ բուժում է ցուցված հիվանդին:

Նշված հարցերի պատասխանները սովորաբար ներառում են գիտելիքի Բլումի տաքսոնոմիայի առավել բարձր մակարդակները բնութագրող բայերը (բացահայտել, վերլուծել, գնահատել, կապակցել, դուրս բերել և այլն)՝ նպաստելով այն վերջնարդյունքների ձևավորմանը, որոնք սահմանվել են ախտաֆիզիոլոգիայի դասընթացի համար [4]:

Դեպքի քննարկման ժամանակ ԽՅՈՒ-ի սկսնակ դասախոսը պետք է սովորի «զսպել իրեն»՝ պատասխանը միանգամից չտալու առումով, պահել ինտրիգը և միայն օժանդակի ուսանողներին՝ հարցի

պատասխանի ճանապարհին: Նման դեպքերում չի արգելվում օգտագործել դասագիրքը, համացանցը (հեռախոսները կամ շարժական լափթոփները)՝ անհրաժեշտ ինֆորմացիան փնտրելու համար: Դասի մթնոլորտը հնարավորինս անկաշկանդ է, ոչ շատ ֆորմալ: Դասախոսը չպետք է վախենա, որ իր հեղինակությունը նսեմանում է նրանից, որ անընդհատ ուշադրության կենտրոնում չէ:

Կլինիկական դեպքը կարելի է վերլուծել ինչպես տեսական նյութի քննարկումից հետո՝ թեմայի յուրացումը ստուգելու և նյութն ամրապնդելու համար, այնպես էլ դասը սկսել՝ հենց դեպքը ներկայացնելով՝ օգտագործելով այն որպես թեման վերլուծելու միջոց (որն ավելի լավ է համապատասխանում ԽՅՈՒ-ի ոճին): Գործնական պարապմունքին կարելի է կիրառել նաև ԽՅՈՒ-ի «լողացող» մոդելը, երբ ուսանողները քննարկում են առաջարկված դեպքը 2-3 հոգանոց խմբերով, իսկ դասախոսը հերթով մոտենում է խմբերին, ստուգում նրանց աշխատանքը և անհրաժեշտության դեպքում ուղղորդում այն (Նկ. 3): Այս մոդելը հնարավորություն է տալիս ցուցաբերելու ավելի անհատականացված մոտեցում, ունենալու լավ հետադարձ կապ, օգնում է ապահովելու մեծ ընդգրկվածություն:




Նկար 3. ԵՊԲՀ-ի երրորդ կուրսի ուսանողները կլինիկական դեպքի փոքր խմբային քննարկման ժամանակ ախտաֆիզիոլոգիայի գործնական պարապմունքին:

ԽՅՈՒ-ի վերաբերյալ ուսանողներից հետադարձ կապ ունենալու համար անցկացրել ենք հարցում երրորդ կուրսն ավարտած 100 հայ և 31 արտասահմանցի ուսանողների շրջանում: Ինչպես երևում է Նկարից (Նկ. 4), ուսանողների համար գործնական պարապմունքների առավել գրավիչ բաղադրյալը իրավիճակային խնդիրների քննարկումն է:

Աղյուսակ 1.

«Ախտաֆիզիոլոգիայի գործնական պարապմունքների ժամանակ տիպային կլինիկական դեպքերի (case study) վերլուծումը ինչ առավելություններ ունի» հարցի յուրաքանչյուր ենթահարց ուսանողները զնահատել են 5-բալային սանդղակով:

Հարցը	Միջին միավորը (Հայալեզու)	Միջին միավորը (Անգլալեզու)
1. Դասն ավելի հետաքրքիր և ուշագրավ է դարձնում:	4,85	4,42
2. Տալիս է գիտելիքը կիրառելու հնարավորություն:	4,83	4,32
3. Օգնում է ծավալելու քննարկում:	4,69	4,00
4. Օգնում է ավելի խոր հասկանալու թեմայի որոշ մասերը:	4,70	4,33
5. Ինֆորմացիան դարձնում է ավելի հիշվող:	4,77	4,23
6. Օգնում է կապեր ստեղծելու այլ առարկաների հետ:	4,52	4,00
7. Իմիտացելով ռեալ կլինիկական իրավիճակներ՝ պատրաստում է պրակտիկ բժշկական գործունեությանը:	4,63	4,42



Նկար 4. «Գործնական պարապմունքների ժամանակ ուսումնական պրոցեսի հր մասն էր Ձեզ առավել հետաքրքրում» հարցին տրված պատասխանները: Այս հարցին պատասխանելիս ուսանողները կարող էին ընտրել 1-ից ավելի պատասխաններ:

Գրավչությունից զատ ուսանողները բարձր են զնահատել կլինիկական դեպքերի քննարկման այլ դրական կողմեր ևս (աղ. 1):

Եզրակացություն

Խնդրի վրա հիմնված ուսուցումն (ԽՀՈւ) ուղղված է կրթության մեջ հարացույցի փոփոխությանը դասախոսակենտրոն ուսուցումից դեպի ուսանողակենտրոնը: Կոնկրետ հիմնախնդրի շուրջ ուսուցման պրոցեսի կազմակերպումը նպաստում է խոր, բազմակողմանի գիտելիքների ձեռքբերմանը, ինչպես նաև կլինիկական պրակտիկայում դրանց արդյունավետ կիրառմանը: Ախտաֆիզիոլոգիայի գործնական պարապմունքներին կիրառվում է քննարկվող թեմային վերաբերող կլինիկական դեպքերի ախտաֆիզիոլոգիական վերլուծությունը: ԽՀՈւ-ի կիրառման վերաբերյալ ուսանողների շրջանում մեր անցկացված հարցումը փաստում է նրանց հետաքրքրվածության և դրական տրամադրվածության մասին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Albanese M.A., Mitchell S. Problem-based learning: A review of literature on its outcomes and implementation issues // Academic Medicine 1993, 68: 52-81
2. Albanese M.A. Problem-based learning: why curricula are likely to show little effect on knowledge and clinical skills // Medical Education, 2000, 34:729-738
3. Armstrong K., Ranganathan R. Toward a Culture of Scientific Inquiry - The Role of Medical Teaching Services// N. Engl. J. Med., 2018 Jan 4; 378(1): 1-3
4. Biggs J.B. & Tang C., 2011; ALIGN, 2017
5. Bloom B.S. Taxonomy of educational objectives: The classification of educational goals. New York: Longman, 1956
6. Boyer E.L. The Boyer Commission on Educating Undergraduates in the Research University, Reinventing Undergraduate Education: A Blueprint for America's Research Universities. Stony Brook, NY, 1998
7. King A. From sage on the stage to guide on the side // College teaching, 1993, 41(1): 30-35
8. Oda Y., Onishi H., Sakemi T. Effectiveness of Student Tutors in Problem-Based Learning of Undergraduate Medical Education // Tohoku J. Exp. Med., 2014, 232: 223-227
9. Saulnier B.M. From "Sage on the Stage" to "Guide on the Side" Revisited: (Un)covering the content in the Learning-Centered Information Systems course // Proc. ISECON 2008, v. 25 (Phoenix)
10. Schwartzstein R.M., Roberts D.H. Saying goodbye to lectures in medical school-paradigm shift or passing fad? // N. Engl. J. Med., 2017 Aug 17; 377(7):605-607
11. White H.B. Getting started in problem-based learning. The power of problem-based learning. In Barbara J. Duch, Susan E., Groh and Deborah E. Allen (Eds.). Sterling, Virginia: Stylus, 2001
12. Кеттайл В.М., Арки Р.А. Патофизиология эндокринной системы. Пер. с англ., М.: "Издательство БИНОМ", 2009

РЕЗЮМЕ

ПРИМЕНЕНИЕ ПРОБЛЕМНОГО ОБУЧЕНИЯ НА ПРАКТИЧЕСКИХ ЗАНЯТИЯХ ПО ПАТОФИЗИОЛОГИИ

Аветисян С.А., Вардересян С.Г., Григорян А.С., Мкртумян В.Р.
ЕГМУ, Кафедра патофизиологии

Ключевые слова: *высшее медицинское образование, центрированное на студенте обучение, проблемное обучение, практические занятия по патофизиологии.*

Проблемное обучение – это метод активного обучения, который фокусирует внимание на том, **как** студенты учат, а не на том, **что** они должны знать. Процесс обучения, построенный вокруг конкретной проблемы, способствует приобретению глубоких, всесторонних знаний, а также развивает умение сохранять, извлекать их из памяти и

использовать эти знания при решении клинических проблем. Во время практических занятий по патофизиологии проводится патофизиологический анализ клинических случаев, относящихся к теме обсуждения. В качестве «проблемы» выступают также учебные эксперименты и научные статьи. Результаты опросов студентов свидетельствуют о большом интересе студентов к различным элементам проблемного обучения, применяющимся в процессе преподавания патофизиологии.

SUMMARY

USING OF PROBLEM-BASED LEARNING DURING PRACTICAL CLASSES OF PATHOPHYSIOLOGY

Avetisyan S.A., Varderesyan S.G., Grigoryan A.S., Mkrtyumyan V.R.
YSMU, Department of Pathophysiology

Keywords: *high medical education, student-centered learning, problem-based learning, practical classes of Pathophysiology.*

Problem-based learning (PBL) is a teaching strategy that shifts the classroom focus from teaching to learning. Studying and solving the real-life problems are vehicles for PBL. The

major goals of PBL are to increase efficacy of education and to link theory with practice. Pathophysiological analysis of relevant clinical cases is performed during the practical classes of Pathophysiology. The results of the student survey show the positive attitude of students toward PBL elements during the Pathophysiology classes.

Հեղինակ	Էջ
Աբբասալիփուր Մ.	73
Ադամյան Ն.Յու.	87
Ալեքսանյան Ա.Յու.	32
Ավետիսյան Ս.Ա.	92
Գալստյան Ս.Գ.	77
Գրիգորյան Ա.Ս.	87,92
Եղիազարյան Յ.Յ.	32
Եղունյան Մ.Ա.	59
Թամամյան Գ.Ն.	45
Խաչատրյան Ա.Ա.	77
Կարապետյան Ս.Ա.	87
Հակոբյան Վ.Ս.	32
Հայրապետյան Ա.Կ.	59
Հովհաննիսյան Գ.Ս.	77
Հովհաննիսյան Վ.Գ.	9
Ղուկասյան Լ.Է.	73
Մալայան Ե.Ա.	49
Մանուկյան Ս.Վ.	49
Մինասյան Ս.Ս.	73
Միրզոյան Յ.Յ.	54,59
Մկրտումյան Ռ.Ռ.	92
Նազարյան Ա.Վ.	77
Պատրիկյան Դ.Ա.	59
Պետրոսյան Ա.Ա.	32
Պողոսյան Վ.Ռ.	77
Սաֆարյան Յ.Յ.	32

Հեղինակ	Էջ
Ստեփանյան Ս.Ա.	32
Վարդերեսյան Ս.Գ.	92
Փափազյան Կ.Տ.	32
Աբրամյան Յ.Է.	17
Ամբարձումյան Գ.Ր.	17
Ասոյան Ա.Վ.	66
Ասրատյան Ա.Ա.	17
Բադալյան Բ.Ս.	17
Բալբաբյան Ա.Տ.	82
Գալստյան Գ.Մ.	82
Գամբարյան Ա.Կ.	3,17
Գյուլազյան Ն.Մ.	66
Դոյժոյան Լ.Տ.	3
Կազարյան Տ.Մ.	40
Լուսինյան Ն.Ա.	82
Միրակյան Գ.Ա.	82
Մկրտչյան Ա.Ա.	66
Մկրտչյան Լ.Ն.	23
Տարոյան Մ.Ս.	3,17
Տադևոսյան Գ.Ի.	82
Տորգոմյան Ա.Լ.	3
Մադաւերճյան Ա.Ը.	3,17
Մադաւերճյան Ը.Ն.	3,17
Մաւոնյան Մ.Վ.	66
Մուկրչյան Ա.Կ.	82
Մուկրչյան Լ.Ա.	82

